12 ԴԵԿՏԵՄԲԵՐ 2013 ՀԻՆԳՇԱԲԹԻ 217(5300)

Ազգ
Azg

ISSN: 1829-1651

# Առավելապաշտ Բաքուն եւ «կառուցողական» Անկարան

ՎԱՀՐԱՄ ԱԹԱՆԵՍՅԱՆ

«Իմ Երեւան այցի ծրագիրը դեռեւս ճշգրտված չէ, բայց չի բացառվում, որ Սեւծովյան տնտեսական համագործակցության կազմակերպության միջոցառումների շրջանակներում լինեն երկկողմ հանդիպումներ»,- haberler գործակալության փոխանցմամբ, որը մեջբերել է ադրբեջանական «Թուրան»-ը, երեկ Անկարայում լրագրողներին ասել է Թուրքիայի արտգործնախարար Ահմեդ Դավութօղլուն:

Նա նաեւ ասել է, որ իր երկիրը «մշտապես հայտարարել է, որ Անկարայի եւ Երեւանի միջեւ հարաբերությունների կարգավորումը խաղաղություն կբերի Հարավային Կովկասին միայն Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ հարաբերությունների բարելավման եւ տարածաշրջանային հակամարտությունները պետությունների տարածքային ամբողջականության սկզբունքի նկատառմամբ կարգավորման պայմանով»:

Ի՞նչ է սպասվում Թուրքիայի ԱԳ նախարարին այսօր Երեւանում, չարժե գուշակել: Ավելի հետաքրքրական է Ադրբեջանի փոխարտգործնախարար Խալաֆ Խալաֆովի արձագանքը Թուրքիայի «նախաձեռնողականությանը»: Երեկ նա հայտարարել է, որ «Թուրքիան ժամանակին Հայաստանի հետ սահմանը փակել է նախ «Հայաստանի կողմից տարածքային պահանջների» (չակերտները մերն են- Վ. Ա.), ապա նոր՝ ադրբեջանական տարածքները «Հայաստանի կողմից օկուպացվելու» (չակերտները մերն են- Վ. Ա.) պատճառով»:

Ինչ վերաբերում է ԼՂ հարցի կարգավորմանը, ապա դրա համար, ըստ Խալաֆովի, «հարկ է ապահովել Ադրբեջանի տարածքային ամբողջականությունը»: Նրա պնդմամբ՝ «Հայաստանը շարունակում է ոչ կառուցողական դիրքորոշում ցուցաբերել եւ առայժմ պատրաստ չէ հակամարտության կարգավորմանը»:

Վերջին ընդգծումը հատկապես ուշագրավ է այն համատեքստում, որ տարացիորեն նախօրեին Խալաֆովի անմիջական ղեկավար Էլմար Մամեդյարովը բավական դրական էր գնահատել Կիեւում արտգործնախարար Էդվարդ Նալբանդյանի հետ հանդիպումը եւ նույնիսկ նախանշել եկող տարեսկզբին սպասվող նոր քննարկումները:

Տեղյակ չէ՞ փոխարտգործնախարար Խալաֆովը Մամեդյարովի հայտարարություններին: Բացառված է: Ուրեմն ի՞նչ է փոխվել Նալբանդյան-Մամեդյարով հանդիպմանը հաջորդած ոչ ավելի, քան մեկշաբաթյա ժամանակաշրջանում: Ընդամենը թուրքական լրատվամիջոցներն «արտահոսք են կազմակերպել», որ Երեւանում Դավութօղլուն «կառաջարկի, որ ադրբեջանական առնվազն երկու շրջաններից հայկական ուժերի դուրսբերման դիմաց Թուրքիան պատրաստ է բացելու Հայաստանի հետ սահմանը»:

Ադրբեջանի փոխարտգործնախարար Խալաֆովի վերոհիշյալ ձեւակերպումները գալիս են վկայելու, որ ԼՂ կարգավորման հարցում Թուրքիայի «կառուցողական» միջամտությունը պաշտոնական Բաքվին սկսել է նյարդայնացնել: Այլապես ինչո՞ւ է Խալաֆովը հիշեցրել, որ Հայաստանի հետ սահմանը Թուրքիան չի բացել, քանի որ երկու երկրներն ունեն չկարգավորված խնդիրներ, իսկ «ադրբեջանական տարածքների օկուպացիան» միայն Թուրքիայի որոշման երկրորդ «հիմնավորումն է»:

Ադրբեջանի փոխարտգործնախարարն, այսպիսով, պաշտոնական Անկարային ուղղակի հորդորել է զերծ մնալ «ադրբեջանական տարածքների» հաշվին Հայաստանի հետ հարաբերությունների կարգավորման «պատրաստակամության» մասին ավելորդաբանություններից:

Հնարավոր է՝ թուրքական եւ ադրբեջանական դիվանագիտությունն այս հարցում որոշակի դերաբաշխում է կատարել, որտեղ Թուրքիային վերապահված է «կառուցողականություն», իսկ Ադրբեջանին՝ առավելապաշտություն դրսեւորել: Այսինքն, Թուրքիան հայտարարում է, որ «ադրբեջանական երկու շրջանների վերադարձման դիմաց» պատրաստ է բարելավել Հայաստանի հետ հարաբերությունները, մինչդեռ Ադրբեջանը շարունակում է պնդել, որ «հակամարտության կարգավորման համար հարկ է ապահովել տարածքային ամբողջականությունը»:

Այս դեպքում թուրքական կողմն, իրոք, կձգտի միջազգային տպավորություն ստեղծել, թե «պատրաստակամ է Հայաստանի հետ հարաբերությունները բարելավելու, սակայն միաժամանակ չի կարող հաշվի չառնել Ադրբեջանի դիրքորոշումը»: Ուշագրավ է, որ երեկ Դավութօղլուն հեռախոսազրույց է ունեցել ԱՄՆ պետքարտուղար Ջոն Քերրիի հետ, որի ընթացքում շոշափվել է եւ ղարաբաղյան կարգավորման, եւ հայ-թուրքական հարաբերությունների թեման: Ի՞նչ համատեքստում են քննարկվել այդ հարցերը՝ դիվանագիտական գաղտնիք է:

Փաստը, սակայն, որ Երեւան ուղեւորվելուց առաջ Թուրքիայի ԱԳ նախարարը հեռախոսազրույց է ունեցել ԱՄՆ պետքարտուղարի հետ, ինքնին խոսուն է:

# Անխոս ձուկը լավագույնս խոսեցրեց մեր խորհրդարանականներին

ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ



Դեռ մեկ օր առաջ սկսված «Բնապահպանական եւ բնօգտագործման վճարների մասին» օրենքի փոփոխությունների նախագծի քննարկումը երեկ մի այնպիսի իրավիճակ ստեղծեց հայոց խորհրդարանում, երբ միմյանց հակադիր տեսակետներ ներկայացնում էին ոչ թե իշխանական եւ ընդդիմադիր պատգամավորները, այլ իշխանականները, ավելին՝ ՀՀԿ-ն ներկայացնող պատգամավորները: Ահա թե երբ պարզաջրվեց մի խորհրդարանի դեմքը, որտեղ հայտնվել են ավելի շատ տնտեսական շահեր ներկայացնողները, ընդ որում՝ բախվում էին փոքր, միջին եւ մենաշնորհված մեծ բիզնես ունեցողների շահերը հենց այդ մի՝ ձկնաբուծարաններին վերաբերող օրենքով: Նշենք, որ փոփոխությունները վերաբերում են ձկնաբուծական եւ խեցգետնաբուծական գործունեություն իրականացնող ձեռնարկությունների համար Արարատյան դաշտի արտեզյան ջրհորների ջրօգտագործման պայմաններին, որի վճարներն ավելանալու են: Արարատի եւ Արմավիրի մարզերում դրանք հաշվարկվելու են ստորերկրյա ջրերի արդյունահանված պաշարի ընդհանուր ծավալի 50 տոկոսի, իսկ մակերեւութային ջրերի օգտագործված ընդհանուր ծավալի 10 տոկոսի հիման վրա, ՀՀ մյուս տարածքներում՝ ստորերկրյա ջրերի արդյունահանված պաշարի, իսկ մակերեւութային ջրերի օգտագործված ընդհանուր ծավալի 5 տոկոսի հիման վրա:

Ըստ նախագիծը ներկայացնող բնապահպանության եւ բնական պաշարների նախարար **Արամ Հարությունյանի**՝ արդյունքում ջրային ռեսուրսների օգտագործումը կկանոնակարգվի, նաեւ կպահպանվեն Հայաստանի համար անգնահատելի ջրային ռեսուրսները, որ այսօր անկանոն եւ անվերահսկելի օգտագործվում են:

Տես էջ 3

# Զինվոր է զոհվել

ՀՀ պաշտպանության նախարարությունը ցավով տեղեկացնում է, որ 10.12.2013թ., ժամը 18:10-ի սահմաններում ՀՀ ՊՆ N զորամասի տարածքում հայտնաբերվել է ներքին վերակարգում որպես օրապահ ընդգրկված ժամկետային զինծառայող, շարքային Վանիչկա Արամայիսի Հովակիմյանի դին՝ ծնոտի ստորին շրջանում հրազենային վիրավորումով:

Փաստի առթիվ ՀՀ ՊՆ քննչական ծառայությունում հարուցվել է քրեական գործ, կատարվում է նախաքննություն:

ՀՀ պաշտպանության նախարարությունը կիսում է ծանր կորստյան վիշտը եւ իր զորակցությունն է հայտնում շարքային Վանիչկա Արամայիսի Հովակիմյանի ընտանիքի անդամներին, հարազատներին եւ ծառայակիցներին:

# Ավստրալացի բժիշկները պտիտակարյունության դեմ դեղ են փորձարկել

Ավստրալացի բժիշկ-գիտնականները հայտարարել են պտիտակարյունության (լեյկեմիա) դեմ փորձարարական դեղի հաջող փորձարկման մասին, տեղեկացնում է «Արմենպրես»-ը՝ հղում անելով ԻՏԱՌ-ՏԱՍՍ-ին:

Ինչպես դեկտեմբերի 11-ին հայտնել է Մելբուռնի ուռուցքաբանական կենտրոնի ղեկավարներից մեկը, ABT-199 դեղի փորձարկման մասնակից է դարձել խրոնիկական լիմֆոցիտար լեյկոզով տառապող 67 մարդ: «Գործնականում նրանք բոլորն էլ անբուժելի հիվանդներ էին, նրանց մնացել էր ապրելու միջին հաշվով 18 ամիս»,- ընդգծել է նա:- Սակայն փորձնական պատրաստուկով գրեթե մեկ տարի շարունակված բուժումից հետո հիվանդների 23 տոկոսը կարողացել է հաղթահարել քաղցկեղը, իսկ 61 տոկոսի մեջ սկսվել է մասնակի ռեմիսիա»:

«Մեր հիվանդների գրեթե մեկ քառորդի մեջ միայն մեկ դեղամիջոցի կիրառումից հետո քաղցկեղային բջիջների նկատմամբ լիակատար հաղթանակը հիրավի անհավատալի բան է»,- ասել է ավստրալացի գիտնականը ABC հեռուստաընկերությանը տված հարցազրույցի ժամանակ:

# Անշարժ գույքի գները Հայաստանում հոկտեմբերին շարունակել են անշարժ մնալ

*Որոշ չափով ավելացել է միայն գործարքների քանակը*

ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

**Անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի՝ շուկայի վերլուծության տվյալների համաձայն, 2013-ի հոկտեմբերին Հայաստանի անշարժ գույքի շուկայում իրականացվել է 18241 գործարք, ինչը 9,7 տոկոսով բարձր է նախորդ ամսվա՝ սեպտեմբերի եւ 4,8 տոկոսով՝ 2012-ի հոկտեմբերի գործարքների համեմատ:**

**Օտարման գործարքների քանակը հոկտեմբերին սեպտեմբերի համեմատ աճել է 11,5 տոկոսով, իսկ անցյալ տարվա հոկտեմբերի համեմատ՝ նվազել 1,1 տոկոսով: 4503 օտարման գործարքներից առքուվաճառքներինը կազմել է 73,2 տոկոսը: Մնացածը նվիրատվություններն ու փոխանակություններն են: Անշարժ գույքի օտարման գործարքների քանակի 44 տոկոսն արձանագրվել է Երեւան քաղաքում: Երեւանում առքուվաճառքի գործարքների 64,5 տոկոսն արձանագրվել է բազմաբնակարան շենքերի բնակարանների նկատմամբ: 2013-ի սեպտեմբերի համեմատ, հոկտեմբերին բնակարանների առքուվաճառքի գործարքների քանակը Երեւանում աճել է 20,4 տոկոսով, իսկ նախորդ տարվա հոկտեմբերի համեմատ՝ 16,3 տոկոսով:**

**Բնակարանների շուկայական միջին գները Երեւանում այս տարվա հոկտեմբերին սեպտեմբերի համեմատ աննշան՝ 0,1 աճ են ունեցել: Ըստ վարչական շրջանների, Երեւանում բնակարանների 1 քմ մակերեսի միջին շուկայական գները այսպիսին են եղել.**

Տես էջ 2

| Վարչական շրջաններ | Միջին գները (դրամ) | | |
|---|---|---|---|
| | հոկտեմբեր 2012 թ. | հոկտեմբեր 2013 թ. | սեպտեմբեր 2013 թ. |
| Կենտրոն | 419500 | 428000 | 428000 |
| Արաբկիր | 347000 | 356600 | 356600 |
| Քանաքեռ-Զեյթուն | 276100 | 282600 | 282400 |
| Նոր Նորք | 239000 | 251800 | 251300 |
| Ավան | 248050 | 256000 | 259500 |
| Էրեբունի | 241500 | 249500 | 249000 |
| Շենգավիթ | 245000 | 255100 | 255100 |
| Դավթաշեն | 267000 | 275000 | 275000 |
| Աջափնյակ | 235600 | 248500 | 248100 |
| Մալաթիա-Սեբաստիա | 232100 | 241800 | 241300 |
| Նուբարաշեն | 142000 | 153000 | 152500 |

# Դատավորներն ընդդեմ մարդու իրավունքների պաշտպանի

***Երեկ «Ազգ»-ը անդրադարձել էր դատարաններին ու դատավորներին քննադատող ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի զեկույցին: Այսօր ներկայացնում ենք դատավորների միության խորհրդի բուռն հակազդեցությունը նույնությամբ, առայժմ ձեռնպահ մնալով մեկնաբանելուց: Սակայն չենք կարող չասել, որ մեր դատավորներն իզուր են վախենում, որ ՄԻՊ-ի զեկույցը կարող է բացասական տպավորություն ստեղծել «հանրության շրջանում»: Դժբախտաբար այդ տպավորությունն առկա է վաղուց, եւ դատավորներն ու դատարանները դեռ շատ պետք է ջանան փոխելու այն:***

*Հայաստանի Հանրապետության դատավորների միության խորհուրդը խստորեն դատապարտում է ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի կողմից 09.12.2013թ. հրապարակված «Արդար դատաքննության իրավունքի վերաբերյալ» հակապետական, հակաօրինական, իրականությանը բացարձակ չհամապատասխանող, սիրողական մակարդակի ուսումնասիրությունների վրա հիմնված, դատական իշխանությունն ու դատավորի բարձր կոչումը նսեմացնող արտահերթ զեկույցը:*

*Հայաստանի Հանրապետության դատավորների միության խորհուրդը հայտարարում է.*

❖ հիմնազուրկ դատողություններից բաղկացած հիշատակված զեկույցը պետական եւ հասարակական կարգի ապակայունացման լուրջ վտանգ է պարունակում, որը միտված է դատական իշխանության նկատմամբ հանրության շրջանում թյուր պատկերացումների ձեւավորմանը

❖ զեկույցն ամբողջությամբ երեւակայության արդյունք է եւ արժեզրկում է ոչ միայն արդարադատության իմաստն ու բովանդակությունը, այլ նաեւ այդօրինակ երեւակայություն ունեցողի իրական առաքելության իմաստը

❖ պրոֆեսիոնալ մարմինը գրավոր թե բանավոր խոսքով հանդես գալու ժամանակ պետք է եւ պարտավոր է ներկայացնել միայն փաստ, եղելություն կամ վերլուծություն ու, բնականաբար, ուսումնասիրությունների չափելի ու համադրելի արդյունքներ, որպիսիք զեկույցում իսպառ բացակայում են

❖ զեկույցում փողոցային բամբասանք հիշեցնող անհեթեթ տեղեկություններ ներառելը հարիր չէ իրավական պետության Մարդու իրավունքների պաշտպանի ինստիտուտին` ընդհանրապես եւ այդ պաշտոնը զբաղեցնող անձին` մասնավորապես:

Հայաստանի Հանրապետության դատավորների միության խորհուրդն ավելորդ չի համարում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին հիշեցնել.

❖ Պաշտպանն իր լիազորությունները իրականացնելիս պարտավոր է ղեկավարվել օրինականության, հասարակական համակեցության եւ սոցիալական արդարության հիմնարար սկզբունքներով, ենթարկվել Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանն ու օրենքներին, ինչպես նաեւ միջազգային իրավունքի հանրաճանաչ սկզբունքներին եւ նորմերին («Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ օրենքի 2-րդ եւ 5-րդ հոդվածներ)

❖ Պաշտպանը պետք է տեղյակ լինի բազմաթիվ միջազգային ակտերի գոյության մասին, որոնցում ամրագրված է դատարանների հեղինակությունը հարգելու եւ այն արատավորող գործողություններ կատարելուց ձեռնպահ մնալու պահանջը, որն ուղղված է դատարանների անկախությունն ապահովելուն:

Հայաստանի Հանրապետության դատավորների միության խորհուրդը, անթույլատրելի համարելով հանրության մոտ դատարանների ու դատավորների վերաբերյալ անվստահություն սերմանելու դիտավորությունը, կարեւորելով դատարանի` որպես արդարադատություն իրականացնող միակ մարմնի հեղինակությունը, ՀՀ մարդու իրավունքների պաշտպանից պահանջում է.

❖ հարգել դատավորի սահմանադրական կարգավիճակը, անշեղորեն պահպանել օրինականության սկզբունքը` ձեռնպահ մնալ դատարանի հեղինակությունն արատավորող հիմնազուրկ դատողություններ հրապարակելուց:

**ՀՀ դատավորների միության խորհուրդ**

# Անշարժ գույքի գները Հայաստանում հոկտեմբերին շարունակել են անշարժ մնալ

*1-ին էջից*

**Մարզերում, բացառությամբ Երեւանի, հոկտեմբերին վաճառվել են 404 բնակարաններ, որոնց քանակը սեպտեմբերի համեմատ նվազել է 2,7 տոկոսով, իսկ 2012-ի հոկտեմբերի համեմատ` 4,7 տոկոսով: Գներն այստեղ հոկտեմբերին սեպտեմբերի համեմատ դարձյալ 0,1 աճ են ունեցել:**

**Երեւանից հետո, ամենաթանկ բնակարանները հոկտեմբերին եղել են Ծաղկաձորում, որտեղ 1 քմ մակերեսի շուկայական գինը կազմել է 292 հազար դրամ: Աբովյանում 1 քմ գինը 155 հազար հազար դրամ է կազմել, Վաղարշապատում (Էջմիածնում)` 154 հազար դրամ, Նոր Հաճընում` 128 հազար դրամ, Եղեգնաձորում` 124 հազար դրամ, Արմավիրում եւ Գորիսում` 121 հազար դրամ, Իջեւանում` 118 հազար դրամ, Մասիսում եւ Աշտարակում` 115 հազար դրամ 1 քմ դիմաց ցուցանիշներով:**

**2013-ի հոկտեմբերին Հայաստանում գրանցվել է անհատական տների առքուվաճառքի 425 գործարք, որից 98-ը` Երեւանում: Մայրաքաղաքում անհատական տների առքուվաճառքի գործարքների քանակը 2013-ի սեպտեմբերի համեմատ նվազել է 19 տոկոսով, իսկ մարզերում` 0,9 տոկոսով: 2012-ի հոկտեմբերի համեմատ անհատական բնակելի տների առքուվաճառքի գործարքների քանակը Երեւանում նվազել է 38,4 տոկոսով, իսկ մարզերում` 7,4 տոկոսով:**

**Միջինացված` 250 քմ շինության մակերես եւ 400 քմ տնամերձ ունեցող անհատական տների 1 քմ-ի միջին գները (ներառյալ տնամերձի միավորի գինը) Երեւանում 2012-ի հոկտեմբերին սեպտեմբերի համեմատ մնացել են անփոփոխ: Ըստ Երեւանի վարչական շրջանների, գների պատկերը հետեւյալն է եղել (տես աղյուսակը).**

| Վարչական շրջաններ | Միջին գները (դրամ) | | |
|---|---|---|---|
| | հոկտեմբեր 2012 թ. | հոկտեմբեր 2013 թ. | սեպտեմբեր 2013 թ. |
| Կենտրոն | 467500 | 476100 | 476100 |
| Արաբկիր | 375000 | 383000 | 383000 |
| Քանաքեռ-Զեյթուն | 286200 | 295000 | 295000 |
| Նորք-Մարաշ | 312500 | 319200 | 319200 |
| Ավան | 264600 | 270500 | 270500 |
| Էրեբունի | 232000 | 239500 | 239500 |
| Շենգավիթ | 249500 | 255000 | 255000 |
| Դավթաշեն | 267000 | 276000 | 276000 |
| Աջափնյակ | 242400 | 250050 | 250050 |
| Մալաթիա-Սեբաստիա | 232100 | 238000 | 238000 |
| Նուբարաշեն | 145100 | 150500 | 150500 |

**Մարզերում միջինացված են 200 քմ շինության եւ 1000 քմ տնամերձ մակերեսով անհատական տների գները: Այստեղ միջին գները հոկտեմբերին սեպտեմբերի համեմատ դարձյալ անփոփոխ են: Ամենաթանկ անհատական տները Երեւանից հետո Ծաղկաձորում են` 1 քմ-ն 305 հազար դրամ: Երկրորդը Աբովյանն է 1 քմ-ն 157 հազար դրամ, երրորդը Վաղարշապատը, որտեղ 1 քմ-ն կազմել է 153 հազար դրամ: Ապա գալիս են Աշտարակը` 136 հազար դրամ, Ջերմուկը` 131 հազար դրամ, Գորիսը` 130 հազար դրամ, Նոր Հաճընը` 129 հազար դրամ, Իջեւանը` 123 հազար դրամ, Բյուրեղավանը` 120 հազար դրամ, Գյումրին` 118 հազար դրամ 1 քմ դիմաց գներով:**

**Հողի շուկայում հետեւյալ պատկերն է` 2013-ի հոկտեմբերին 2012-ի հոկտեմբերի համեմատ, հողերի առքուվաճառքի գործարքների քանակն նվազել է 12 տոկոսով, աճուրդով վաճառքներինը` նվազել 43,4 տոկոսով:**

**2013-ի հոկտեմբերին սեպտեմբերի համեմատ, անշարժ գույքի վարձակալության գործարքների քանակն աճել է 1,2 տոկոսով, իսկ 2012-ի հոկտեմբերի համեմատ` նվազել 28,1 տոկոսով:**

**Հոկտեմբերին իրականացվել են հիփոթեքային գրավադրման 167 գործարքներ, որից 122-ը` Երեւանում: Սեպտեմբերի համեմատ, հիփոթեքային գրավադրման գործարքների քանակը Երեւանում աճել է 19,6 տոկոսով, իսկ մարզերում` նվազել 14,9 տոկոսով: 2012-ի հոկտեմբերի համեմատ, հիփոթեքային գրավադրման գործարքների քանակը Երեւանում նվազել է 0,8 տոկոսով, իսկ մարզերում` 4,3 տոկոսով:**

**Այսպիսով, անշարժ գույքի գները հոկտեմբերին շարունակել են անփոփոխ մնալ, թեեւ գործարքների քանակը որոշ չափով ավելացել է: Սակայն, ընդհանուր առմամբ, այս տարի անշարժ գույքի շուկայում լուրջ տեղաշարժեր չեն արձանագրվում եւ հավանական է, որ տարվա վերջին երկու ամիսներին նույնպես ներկա իրավիճակը պահպանվի:**

ՓԱՐԻԶ

# Զինված ընդհարման դեպքում մշակութային արժեքների պաշտպանությանը նվիրված հանդիպումներ ՅՈՒՆԵՍԿՕ-ի կենտրոնակայանում

Դեկտեմբերի 10-13-ը Փարիզում ՅՈՒՆԵՍԿՕ-ի կենտրոնակայանում անցկացվում է մշակութային ինքնարտահայտման ձեւերի բազմազանության պաշտպանության եւ խրախուսման հարցերով միջկառավարական կոմիտեի նիստը, իսկ դեկտեմբերի 16-19` զինված ընդհարման դեպքում մշակութային արժեքների պաշտպանության մասին հանդիպումները:



Մշակութային ինքնարտահայտման ձեւերի բազմազանության պաշտպանության եւ խրախուսման հարցերով միջկառավարական կոմիտեում Հայաստանն ընտրվել է նախագահ եւ կոմիտեի անդամ է: Կոմիտեի աշխատանքները նախագահելու է մշակույթի նախարարի տեղակալ Արեւ Սամուելյանը: Դեկտեմբերի 10-13-ը ներառյալ կայանալու է կոմիտեի լիագումար նիստը, որի ընթացքում քննարկվելու են նոր ստացված քառամյա պարբերական զեկույցները, մշակութային բազմազանության հիմնադրամի շրջանակներում իրականացված միջոցառումները, դրամահավաքի իրականացման ռազմավարությունը եւ հիմնադրամի միջոցների ծախսումը, ինչպես նաեւ այլ հարցեր:

1954 թ. Հաագայի կոնվենցիայի շրջանակներում կազմակերպվելիք նիստերին կմասնակցեն ՀՀ մշակույթի, ՀՀ արտաքին գործերի եւ ՀՀ պաշտպանության նախարարությունների ներկայացուցիչները:

1954 թ. կոնվենցիայի միջկառավարական կոմիտեում նախատեսվում են ընտրություններ, քննարկվելու են նշված կոնվենցիայի քարտուղարության կողմից իրականացված գործողությունները, բռնազավթված տարածքներում մշակութային արժեքների պաշտպանության, ներկայացված ազգային զեկույցների, Երկրորդ արձանագրության եւ Համաշխարհային ժառանգության կոնվենցիայի համատեղելիության հետ կապված այլ հարցեր:

**Ս. Հ.**

# Ընդամենը 16 ամիս մինչեւ 2015-ի ապրիլի 24-ը

«Ազգ»-ի թղթակից Ժան Էսքիյանը Փարիզից տեղեկացնում է, որ մի շարք ծրագրեր են իրագործման փուլում` նշելու Մեծ եղեռնի հարյուրամյա տարելիցը: Դրանցից մի քանիսը համաշխարհային նշանակության ծրագրեր են, օրինակ` ֆրանսիացի ֆիլմարտադրիչ Ռոբեր Կետիկյանի եւ լոսանջելեսաբնակ Ատոմ Սեւադայի ֆիլմերը: Վերջինս Սամվել Սեւադայի որդին է, ֆիլմ է պատրաստում «The Genex» վերնագրով Կոմիտասի կյանքի որոշակի դրվագների մասին: Բայց, ահազանգում է Էսքիյանը, Սեւադային պակասում են ֆինանսական միջոցները, որոնք խոստացվել են նրան Հայաստանի մշակույթի նախարարության եւ մի քանի գործարարների կողմից:

«Մենք ընդամենը 16 ամիս ունենք մինչեւ 2015 թվի ապրիլի 24-ը եւ հուսով ենք, որ անհետեւողականության եւ անվճռականության հետեւանքով ծրագրերը չեն ձախողվի», եզրակացնում է Էսքիյանը:

**Հ. Ծ.**

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան ԻԲ տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
**«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ**
Երեւան 0010, Հանրապետութեան 47
e-mail: azg@azg.am, azg2@arminco.com
**www.azg.am**
Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ հեռ. 060 271117
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ հեռ. 060 271113
Հաշվապահութիւն (գովազդ) հեռ. 582960 060 271112
Լրագրողների սենեակ հեռ. 060 271118
Համակարգչ. ծառայութիւն հեռ. 060 271115
***Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն***
հեռ 060 271114, 010 529353
Համակարգչային շարուածքը` «Ազգ» թերթի

Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատուութիւն չի կրում:

"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 60 271117
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

Անցուդարձ

# ԱՄՆ աջակցությունը կընդգրկի նաեւ Հայաստանի արդյունաբերության 5 ճյուղեր

## *Ներկայացվեց ԱՄՆ ՄԶԳ Հայաստանի զարգացման աջակցության 2013-2018 թվականների ռազմավարությունը*

Հայաստանի տնտեսության 5 ոլորտներ՝ ճշգրիտ սարքաշինություն, դեղագործություն, տեղեկատվական տեխնոլոգիաներ, ագրոբիզնես եւ դեղարտադրություն, աջակցություն կստանան ԱՄՆ միջազգային զարգացման գործակալությունից առաջիկա 5 տարիներին: Այդ մասին հայտնի դարձավ երեկ՝ Հայաստանի զարգացման աջակցության 2013-2018 թվականների ռազմավարության ներկայացման ժամանակ: Այն ներկայացրեց ԱՄՆ ՄԶԳ հայաստանյան առաքելության տնօրեն **Քարեն Հիլիարդը**:

Քարեն Հիլիարդը նախ հայերեն ողջունեց միջոցառման մասնակիցներին, ապա անգլերեն ներկայացրեց ռազմավարության մանրամասները: ԱՄՆ ՄԶԳ առաքելության տնօրենը նշեց, որ Հայաստանը գտնվում է դժվար վիճակում, փոքր երկիր է՝ փոքրաթիվ բնակչությամբ, շրջափակված է, ունի սառեցված հակամարտություն, էներգիայի սահմանափակ աղբյուրներ, բայց զարգացման հնարավորություններ եւ ներուժ: Քարեն Հիլիարդը ներկայացրեց Հայաստանի ներկա կացությունը՝ Doing business-ի ցուցանիշով 189 երկրներից 37-ն է, ինչը վատ չէ, բայց տարածաշրջանում Վրաստանից հետ է մնում, համաշխարհային մրցունակության ցուցանիշով 187 երկրների մեջ 78-ն է, որ լավ ցուցանիշ է, մարդկային զարգացման ցուցանիշով 87-րդն է 186 երկրների մեջ եւ հնարավորություն ունի առաջ գնալու, կոռուպցիայի ցուցանիշով 94-րդն է 177 երկրների մեջ, իսկ ժողովրդավարության ցուցանիշով 7-բալանոց համակարգում ունի 5,6 բալ, ինչը լավ ցուցանիշ է:



ՖՈՏՈԼՈՒՐ

2018-ին, ըստ ԱՄՆ ՄԶԳ-ի, Հայաստանը պետք է ունենա ավելի դիվերսիֆիկացված եւ մրցունակ տնտեսություն, փոքր եւ միջին ձեռնարկությունները կզարգանան, բիզնեսը կվճարի հարկերը, կոռուպցիան կնվազի, ԶԼՄ-ները ու քաղաքացիական հասարակությունն ավելի կայացած կլինեն, որպեսզի այլեւս կարիք չունենան արտասահմանյան դրամաշնորհների, կներգրավի Սփյուռքի ներուժը: Ծրագրի նպատակներն են ավելի լավ եւ բարգավաճ Հայաստան, կայուն եւ ընդգրկուն տնտեսական աճ, տեղական կառավարման ապակենտրոնացում, պետական կառավարման, սոցիալական քաղաքականության եւ առողջապահության բարելավում:

Աշխատակազմի ղեկավար-նախարար **Վաչե Գաբրիելյանը** խոսեց Հայաստանին աջակցելու հնգամյա ռազմավարության տնտեսական հատվածի մասին, հիշատակելով վերոնշյալ 5 հատվածները եւ նշելով, որ դրանք Հայաստանի կառավարության կողմից ճանաչվել են որպես գերակայություն եւ մաս են կազմում արտահանման ուղղվածություն ունեցող արդյունաբերական զարգացման քաղաքականության մեջ ընդգրկված ճյուղերի: Վաչե Գաբրիելյանն անդրադարձավ ԱՄՆ ՄԶԳ աջակցությամբ Հայաստանում իրականացվող այլ ծրագրերին, որոնց թվում նաեւ կենսաթոշակային բարեփոխումներին: Նախարարը կարեւորեց նաեւ ժողովրդավարության աջակցությունը, որը կմոտեցնի կառավարությանը եւ քաղաքացուն, ինչպես նաեւ համագործակցությունը սոցիալական ոլորտում:

ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

# Անխոս ձուկը լավագույնս խոսեցրեց մեր խորհրդարանականներին

*1-ին էջից*

Իսկ ավելի մարդկային լեզվով եթե ասենք՝ խորքային հորերի եւ ջրային ծավալների օգտագործվող ջուրը 10 անգամ թանկացվում է, վերացվում են ձկնաբուծարաններին տրվող արտոնությունները: Ճիշտն ասած՝ նախորդ օրը տեղի ունեցած սույն քննարկմանը ներկա չենք եղել, սակայն հայտնի է, որ ԱԺ փոխնախագահ **Հերմինե Նաղդալյանն** ու **Արփինե Հովհաննիսյանն** ակնարկում էին, որ փոփոխությունների արդյունքում ձկնամթերքը կթանկանա, իսկ նախարարն էլ մոլորություն էր անվանել նրանց այս տեսակետները: Իսկ արդեն երեկ տեղի ունեցած քննարկման շարունակությունը պարզապես կարելի է տնտեսական լոբբինգի գլուխգործոց անվանել, որտեղ երեւակվեցին ամենատարատեսակ շահեր: Ու սա կարելի դասագրքային օրինակ դարձնել այն առումով, որ եթե ձեւավորում ես օլիգարխիկ հիերարխիան արտացոլող խորհրդարան, ապա ամենակարեւոր տնտեսական հարցերում պետք է սպասել (եւ հաճախ է տեղի ունենում) այսպիսի պատկեր: Եվ սա անգամ երկրի նախագահի համար կարող է ուսումնասիրելու նյութ եւ հետեւությունների առիթ տալ:

ԱԺ փոխնախագահ Հերմինե Նաղդալյանն իր ելույթում իր ներկայացրած ուժի՝ ձեւավորած կառավարության ներկայացուցչին քոփի փեստով եւ ֆորմալ եզրակացություններով օրենքներ խորհրդարան բերելու մասին էր դիտողություն անում՝ նշելով, որ եթե մեկ հումքատեսակը 10 անգամ թանկացնում է, դա չի կարող գնային ազդեցություն չունենալ:

**Արտաշես Գեղամյանը** պաշտպանում էր փոփոխությունները ոչ միայն բնապահպանական, այլեւ ազգային անվտանգության առումով:

Զարմանալիորեն տիկնանց պատիվը սկսեց պաշտպանել ոչ թե ՀՀԿ-ական, այլ անկախ պատգամավոր **Էդմոն Մարուքյանը**, որը խիստ զարմացել էր Արամ Հարությունյանի ոճից՝ խոստանալով չհանդուրժել այն եւ կոչ էր անում նրան չվիրավորել եւ խելոք պատասխանել պատգամավորների հարցերին, քանի որ իրենց՝ պատգամավորների տուն է եկել: Նրան համամիտ էր ԱԺ նախագահը՝ կառավարության անդամը պատգամավորին չպետք է վիրավորի: **Արփինե Հովհաննիսյանը** երկրորդեց Հերմինե Նաղդալյանին՝ նախագիծը բնապահպանական խնդիրներ է լուծում, իրենք դեմ չեն, բայց տնտեսական հետեւանքներ է առաջացնում. հետեւանքներն իմանան, ու նոր կողմ քվեարկեն, ու մի թեթեւ էլ սպառնաց, թե՝ «այն ոճը, որով Դուք եք պատասխանում, պատասխան ոճ կբերի»:

Ապա խոսեց ԱԺ նախագահը՝ նշելով, թե 1 մլրդ 700 մլն խմ ջուր ենք օգտագործում՝ 600-700 մլն-ով ավելի նախատեսվածից, ապօրինի օգտագործում կա, ուրեմն եւ համալիր լուծում է պետք, օրենքով թող սահմանափակվի թույլտվությունների տրամադրումը. «Եթե գործարարը վճարի բարձրացված գները, կշարունակի օգտագործել ստորգետնյա ջրային ռեսուրսները ու մենք ի՞նչ կշահենք: Մեր խնդիրն է ստորգետնյա ջրային ռեսուրսները պահպանել: Մենք երեկ պարոն Հարությունյանի հետ հարցը քննարկել ենք, մասնակցել է նաեւ Այվազյան Վարդանը, եւ խնդիրը ընդունվել է այլ հարթությունում, որ մենք օգտագործում ենք 1.6 մլրդ ջրային ստորգետնյա պաշարներ, որը սահմանվածից 600-700-ից ավել է: Չեմ էլ ուզում անդրադառնալ, թե ինչո՞ւ ենք այդքան թույլտվություններ տվել պաշարների օգտագործմանը: Մենք ժամանակին գիտեինք՝ որքան է մեր հնարավորությունը: Հիմա այդ 1.6 մլրդ-ի մեջ ինչքա՞ն է ապօրինի օգտագործվում: Դա պետք է գույքագրենք, հասկանանք, որքանը կարողանանք փակել, թույլ չտալ, որ հետագայում հասկանանք՝ ի՞նչ հարց ենք լուծում»:

Այս բոլորը բերեց նրան, որ ի վերջո **Արամ Հարությունյանը** ստիպված եղավ ամբիոնին մոտենալ եւ ասել, որ ինքը նպատակ չի ունեցել վիրավորել, եթե վիրավորել է՝ ներողություն է խնդրում. «Ինչ եմ արել, չարություն եմ արե՞լ», հարցրեց՝ հիշեցնելով, որ ինքն էլ նրանց պես փոքրիկ, կներեք՝ պատգամավոր է եղել մի երկու գումարում... Եւ ապա հանրամատչելի բացատրեց, որ տնտեսավարողը 1800 դրամ արժեցող 1 կգ ձկի համար ջրի դիմաց 2,5 դրամ է մուծում, վճարն ավելացնելուց հետո դառնալու է 25-30 դրամ, սա ի՞նչ ազդեցություն է թողնելու գնի վրա:

Վարչական իրավախախտումների մասին օրենքի փոփոխություններով էլ ջրօգտագործման խախտումների դեպքում տույժերն էին ավելանալու՝ կազմելով մոտ 300 հազ. դրամ: Սա եւս անհասկացողություն առաջ բերեց, քանի որ փոքր բիզնեսի համար 100-150 դրամ տույժերն ավելացնելը մահ է, այդպես էր կարծում **Լյովա Խաչատրյանը**, իսկ խոշոր բիզնեսի համար՝ խաղ, կմուծի տուգանքն ու կշարունակի աշխատել: Հարակից զեկուցող լինելով եւ հանձնաժողովի դրական եզրակացությունը ներկայացնելով՝ փոքր բիզնես-շրջանակ ներկայացնող Լ. Խաչատրյանն անձամբ դեմ էր այս փոփոխություններին:

Ներքին այս հակադրությունները լավ դիտարկած եւ ակամա արբիտրի դերում հայտնված միակ ելույթ ունեցած ընդդիմադիր պատգամավոր **Զարուհի Փոստանջյանին** մնում էր լավագույնս օգտագործել ընձեռված առիթն ու ֆիքսել, թե ինչպես են խորհրդարանում բախվում հսկայածավալ լճեր ունեցողների (ակնհայտորեն նկատի ուներ Հովիկ Աբրահամյանին) եւ փոքր ձեռնարկատերերի շահերը, եւ տեսակետ հայտնել, որ հերթական անգամ այս ոլորտում եւս փոքր բիզնեսը դուրս է մղվում եւ ոլորտը տարվում մենաշնորհացման:

Արդեն ելույթներում ամենատարբեր սրացումներ եղան: Օրինակ՝ Ազգային ժողովի նախագահին իր արտահերթ ելույթը տարավ անձնական դաշտ, նշելով, որ այստեղ հանկարծ պարզվեց, որ ինքը ձկնարդյունաբերություն ունի, ապա եւ կոշտացավ, թե մամուլում իր դեմ նյութերի պատվեր են տալիս՝ քիչ է, մեկ պատվիրատու էլ նստած է դահլիճում՝ մամուլում նյութեր պատվիրելով այն մասին, որ ինքը ձկնարդյունաբերական օբյեկտներ ունի, եւ խորհուրդ տալով պատվերի վրա ծախսվող փողը ծախսել բարեգործական նպատակով, եւ ոչ թե «հաստավիզ» լրագրողներին հարստացնել: Նրա այդ խոսքից հետո ես սկսեցի մտովի հիշել ու համեմատել լրագրողների վզերը. տեսնես ո՞ր մեկին է վերաբերում այդ «հաստավիզ» բառը, քանի որ իմ իմացած լրագրողների վզերը բավական բարակ, անգամ նրբագեղ էին:

Դե նրան էլ պատասխանեց Զարուհի Փոստանջյանը, ով պաշտպանեց լրագրողներին, թե՝ նրանք տեսնում են՝ ինչ երկրում են ապրում: Իսկ բարեգործության մասով էլ նշեց, թե Հայաստանի քաղաքացիները բարեգործության կարիք չունեն, նրանք խելացի եւ աշխատասեր են եւ ուրենց կպահեն, եթե՝ «դուք նրանց չթալանեք եւ մղեք արտագաղթի»:

Ահա այսպիսի ձմեռային սրացում:

Երեկ սկսեց քննարկվել նաեւ 2014 թվականի բյուջեն՝ հիմնական քննարկման կանոնակարգային դադարից հետո: Այսօր սպասվում է վարչապետ Տիգրան Սարգսյանի ելույթը:

Գիտամշակութային մեծ նվաճումներով աշխարհին հայտնի մեր ժողովուրդը աչքի է ընկել վառ անհատականություններով ու նվիրյալներով, որոնք անմնացորդ ծառայել ու ծառայում են իրենց հայրենի երկրին ու ժողովրդին: Այդ մարդկանց համար հաստատուն ու հանրօգուտ նկարագիր ունենալը գոյատեւումի երանելի իմաստ է: Նման բարձր հատկանիշներով է օժտված կատարյալ հայի ու քաղաքացու տիպար, հասարակական-քաղաքական գործիչ, գիտակրթական համակարգի տաղանդավոր կազմակերպիչ, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Հրաչիկ Ռուբենի Սիմոնյանը:

# Արգասաբեր ուղի

*Վաստակաշատ պատմաբան-հայագետ, ակադեմիկոս Հրաչիկ Սիմոնյանի ծննդյան 85-ամյակի առթիվ*



Նա ծնվել է 1928թ. դեկտեմբերի 8-ին Գորիսում: Քաղաքի միջնակարգ դպրոցն ավարտելուց հետո ընդունվել է Երեւանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետը եւ գերազանց առաջադիմությամբ ավարտել 1952-ին: 1959թ. Հ. Սիմոնյանը մեկնում է Մոսկվա եւ ընդունվում Կենտկոմին առընթեր հասարակական գիտությունների ակադեմիա, որն ավարտում է 1962թ. եւ այնտեղ էլ նույն տարում պաշտպանում է թեկնածուական դիսերտացիա ու հրատարակում իբրեւ առաջին գիտական աշխատություն: Գալով Երեւան՝ նա աշխատանքի է անցնում ՀԿԿ Կենտկոմի կուսպատմության ինստիտուտում՝ որպես ավագ գիտաշխատող: 1990-1991թթ. վարել է ՀՀ ԳԱԱ-ի պատմության եւ տնտեսագիտության բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղարի պաշտոնը, իսկ 1991-1994թթ. եղել է Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեի նախագահ:

1994-2007թթ. հանդիսացել է ՀՀ ԳԱԱ նախագահի խորհրդական, միաժամանակ 1999-2003 թվականներին ղեկավարելով Երեւանի պետական համալսարանի հայոց պատմության ամբիոնը: Տարբեր ժամանակներում Հ. Սիմոնյանը եղել է շրջանային եւ քաղաքային խորհուրդների, ՀԽՍՀ Գերագույն խորհրդի եւ ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր, ՀԿԿ Կենտկոմի անդամ: Նա հասարակական ակտիվ աշխատանքներ է կատարել՝ լինելով բազմաթիվ գիտական խորհուրդների, գիտական հանդեսների խմբագրական խորհուրդների կազմում, հանդիսացել է Հայաստանի ժողովրդական համալսարանների հանրապետական խորհրդի, Հայաստանի մտավորականության խորհրդի նախագահ եւ այլն:

1960-թվականներին Սիմոնյանի գիտական հետաքրքրությունների ոլորտը հայկական սփյուռքն էր, հատկապես այնտեղ գործող հայ քաղաքական ուժերը, նրանց գործունեությունը, փոխհարաբերությունները, Խորհրդային Հայաստանի նկատմամբ վերաբերմունքը: 1968թ. հրատարակվում է նրա «Սփյուռքահայությունը սոցիալ-քաղաքական պայքարի ուղիներում» գիրքը: 1970-ական թվականների սկզբներից Սիմոնյանի գիտական հետաքրքրությունների կենտրոնում եղել են քաղաքական-փիլիսոփայական բնույթի հարցերը: Նա ընթերցողներին է ներկայացնում ծավալուն մենագրություններ՝ «Ինդուստրյալ հասարակության տեսությունները» (1973թ.), «Արդի բուրժուական գաղափարախոսության քննադատական ուրվագծեր» (2 հատորով, 1977թ.), «Գիտատեխնիկական հեղափոխությունը եւ նրա սոցիալական հետեւանքները» (1982թ.) եւ այլն: Այդ աշխատություններում տրվում են բուրժուական գաղափարական մի շարք ուղղությունների ծագման ու զարգացման պատմությունը, դրանց հետագա փոխակերպումների փուլերն ու սոցիալ-դասակարգային էությունը: Գիտական մեծ արժեք է ներկայացնում 1980թ. հրատարակած «Թուրք ազգային բուրժուազիայի գաղափարաբանությունը եւ քաղաքականությունը» ուսումնասիրությունը, որում հանգամանորեն բացահայտված են այդ գաղափարախոսության հիմնական բաղադրիչները՝ օսմանիզմ, իսլամիզմ, պանիսլամիզմ, թուրքիզմ, պանթուրքիզմ: Հանգամանորեն վերլուծելով հատկապես պանթուրքիզմի էությունը (ծայրահեղ շովինիզմ եւ մարդատյաց ռասիզմ)՝ հեղինակը կատարել է կարեւոր եզրահանգումներ:

Գիտնականը միաժամանակ շարունակում է Հայաստանի եւ Անդրկովկասի կոմունիստական շարժման պատմության վերաբերյալ հանդես գալ բազմաթիվ հրապարակումներով, եղել է «Հայաստանի կոմունիստական կուսակցության պատմության ուրվագծեր» (Երեւան), «Անդրկովկասի կոմունիստական կազմակերպությունների պատմության ուրվագծեր» (Թիֆլիս) կոլեկտիվ աշխատությունների ստեղծողներից մեկը եւ ընդհանրապես այդ տարիներին համարվում էր նշված թեմատիկայի խոշոր մասնագետներից մեկը Անդրկովկասում:

1970-ականների վերջերից Հ. Սիմոնյանի գիտական ուսումնասիրությունների միակ բնագավառը դառնում է հայագիտությունը: 1991թ. լույս է տեսնում նրա «Թուրք- հայկական հարաբերությունների պատմությունից» մենագրությունը: Մի շարք հրապարակումներից հետո (1996թ.) երկու ստվարածավալ գրքերով ընթերցողների սեղանին է դրվում «Անդրանիկի ժամանակը» մեծարժեք աշխատությունը՝ գրված հայ ազգային-ազատագրական շարժման լայն համայնապատկերի վրա: Մենագրությունում առաջին անգամ շրջանառվում են հարյուրավոր նորահայտ արխիվային փաստաթղթեր եւ նյութեր: Աշխատությունը միանգամայն նոր խոսք է ազգային հերոսի կյանքի ու մարտական անցած ուղու մասին: Շարունակելով հայ ժողովրդի ազատագրական պայքարի պատմության խորքային պեղումները՝ Հ. Սիմոնյանը ստեղծում է «Ազատագրական պայքարի ուղիներում» հինգհատորանոց աշխատությունը, որի առաջին 2 հատորները լույս են տեսել 2003թ., իսկ մյուս 2-ը՝ 2009 եւ 2010թթ., հինգերորդ՝ վերջին հատորը՝ 2013թ.: Ժամանակաշրջանի համաշխարհային իրադարձությունների լույսի ներքո այդ հատորներում բացահայտված են 1905-1914թթ. հայոց պատմության նորանոր էջեր: Հազարից ավելի էջեր ընդգրկող յուրաքանչյուր հատորում օգտագործվել են բազմաթիվ աղբյուրներ՝ ՀՀ Ազգային արխիվի, Մատենադարանի, ազգային գործիչների անձնական արխիվների բազմաթիվ նյութեր, ժամանակի մամուլում զետեղված փաստեր, որոնց մեծ մասը առաջին անգամ է շրջանառության մեջ դրվում: Հ. Սիմոնյանը վերլուծել եւ համակողմանիորեն քննության է առել 20-րդ դարասկզբից մինչեւ Առաջին համաշխարհային պատերազմն ընկած ժամանակահատվածում Արեւելյան եւ Արեւմտյան Հայաստանում տեղի ունեցած դեպքերն ու իրադարձությունները եւ կատարել արժեքավոր եզրահանգումներ: Արժեւորելով ականավոր գիտնականի մեծածավալ հինգհատորյակը՝ անհրաժեշտ է նշել, որ բոլոր հատորներն էլ աչքի են ընկնում իրենց ինքնատիպությամբ, գիտական խորաթափանցությամբ, փաստական հարուստ նյութերի բազմակողմանի վերլուծությամբ, կատարված եզրակացությունների տրամաբանությամբ ու գիտական նորույթով: Հայ ազատագրական պայքարին նվիրված այդ 5 հատորները կատարվել են հեղինակին բնորոշ բարեխղճությամբ ու գիտական բարձր պատասխանատվությամբ: Պատմական փաստերի վերլուծության հիման վրա կատարված ինքնուրույն դատողությունները, անհրաժեշտ եզրակացություններն ու առաջարկները խիստ արդիական են, ունեն քաղաքական կարեւոր նշանակություն՝ հատկապես պատմությունից դասեր քաղելու առումով:

Դեռեւս 2009թ. ապրիլին, երբ լրանում էր Կիլիկիայի հայերի ջարդերի 100-ամյակը, այդ առիթով լույս տեսավ գիտնականի «Կիլիկիահայերի կոտորածները» արժեքավոր ծավալուն մենագրությունը, որն իր վրա բեւեռեց պատմաբանների եւ առհասարակ ընթերցող հասարակության ուշադրությունը: Ինչպես տեսնում ենք՝ նշանավոր գիտնականի կեսդարյա վաստակը ծանրակշիռ է եւ ուսանելի:

1970թ. Հ. Սիմոնյանը պաշտպանել է դոկտորական դիսերտացիա, իսկ մեկ տարի անց ստացել է պրոֆեսորի կոչում: Գիտության մեջ ներդրած ավանդի համար 1986 թվականին նա ընտրվել է Հայաստանի Գիտությունների ակադեմիայի թղթակից անդամ, իսկ 1996թ.՝ իսկական անդամ:

Հայ ժողովրդի նորագույն ազգային-ազատագրական շրջանի պայքարի առաջին իսկ օրերից Հ. Սիմոնյանը արցախցիների կողքին էր: Քաջատեղյակ լինելով Կովկասյան Հայաստանը բաժան-բաժան անելու պատմությանը՝ նա իր գրչով ճշմարտությունը հաղորդում էր ժողովրդին: Չեն մոռացվել այդ տարիների նրա տասնյակ հոդվածներն ու հրապարակային ելույթները, որոնք խանդավառում էին մարդկանց: Լինելով ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր՝ նա հեղինակել եւ քննարկման է ներկայացրել որոշումների բազմաթիվ նախագծեր: Այդ տարիների պատմության շատ վավերագրեր ու նյութեր, որոնք արտացոլում են քաղաքական գործչի ու գիտնականի գործունեությունը, պահպանվում են ՀՀ Ազգային արխիվում (տե՛ս «Հ. Սիմոնյանի ֆոնդ»):

1964թ. Հ. Սիմոնյանը դասավանդել է ԵՊՀ պատմության եւ փիլիսոփայության ֆակուլտետներում, հանրապետության ուրիշ բուհերում, գիտական զեկուցումներով հանդես է եկել Մոսկվայում, Լենինգրադում, Թբիլիսիում, Բաքվում, ԱՄՆ-ում, Ֆրանսիայում, Գերմանիայում եւ այլուր՝ ըստ արժանվույն ներկայացնելով հայրենի գիտության նվաճումները: Նրա գրվածքներից մի քանիսը լույս են տեսել Չեխոսլովակիայում, ԱՄՆ-ում, Լիբանանում:

Ակադեմիկոս Հրաչիկ Ռուբենի Սիմոնյանը բացառիկ ունակություններով օժտված անհատականություն է: Զարմանք է պատճառում նրա աշխատասիրությունը: Նա մտավորականի բարձր տիպար է՝ պարզ, անկեղծ ու բարյացակամ:

Սրտանց շնորհավորելով բազմավաստակ ու մեծանուն գիտնականին ծննդյան 85-ամյա հոբելյանի կապակցությամբ, ցանկանում ենք նրան արեւշատություն, նորանոր հաջողություններ եւ բեղուն ստեղծագործական աշխատանք, ազգանվեր նոր իրագործումներ:

**ԷԴԻԿ ՄԻՆԱՍՅԱՆ**
**ԵՊՀ Պատմության ֆակուլտետի դեկան,**
**Պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր**



## Արի ու տես

*Եկանք տեսանք եւ լսեցինք, բայց զարմացանք ու զայրացանք*

**Հանրային հեռուստատեսությունը եւ համայն հայության հետ նշեց դեկտեմբերի 7-ը՝ ահավոր երկրաշարժի սեւ օրը: Բայց լավ կլիներ, որ չնշեր: Այդ օրը նա նշեց տաշի-տուշով՝ ԳՅՈՒՄՐԱ ՀԱՐՍԱՆԻՔՈՎ: Գիտեմ, չեք հավատա, բայց ինչ կարող ես անել, մակարդակի հարց է: Զարմանում ես, մի՞թե այդ ահռելի հեռուստատեսությունում չկար մեկը, որ մտներ նոր տնօրենի մոտ եւ ասեր. «Այս ի՞նչ եք անում... ամբողջ աշխարհն է սգում»: Հիշեցի՝ հինգ տարի առաջ գրողներ, երաժիշտներ, նկարիչներ, դասախոսներ, դերասաններ, անգամ եկեղեցականները հայր Կոմիտասի ղեկավարությամբ, հավաքվել էին հյուրանոցներից մեկի դահլիճում, անկախ կուսակցական պատկանելությունից եւ գրաված դիրքից, բռունցքվել էին եւ միահամուռ ջախջախում էին, իրենց բառերով ասած, գործ հեռուստատեսությանը. հարվածի տակ էին գրեթե բոլոր հեռուստաընկերությունները: Բոլորից շատ՝ Հանրայինը, որին էլ «արժանացրին» «տխմար եթերի համար մրցանակը»:**

**Ճշմարտության մեջ չմեղանչելու համար ասեմ, որ Հ1-ը դրանից ճիշտ հետեւություններ արեց եւ փոխեց իր դեմքը: Նախ վերականգնեց իր ձեռքով դուրս շպրտած հայկական երգը՝ երգ-երգոցը, որը Գեւորգ Ալթունյանի «Տեսանկյուն»-ի հետ դարձավ Հ1-ի այցեքարտը: Ի հայտ եկան բազմաթիվ հետաքրքրական ծրագրեր եւ հաղորդումներ: Լրագրողները, այդ թվում նաեւ ես, գովաբանում էին եւ շնորհակալական խոսքեր ուղղում Հ1-ին: Բայց ի՞նչ պատահեց: Ասում են՝ ղեկավարին փոխել են, չգիտեմ, այդ խոհանոցին ծանոթ չեմ, բայց թե ի՞նչ պատահեց, կասեմ: Շնորհաշատ Արթուր Բախտամյանի «Հայոց հարցը», որտեղ նա պատմում էր մեր գրեթե մոռացված մեծերի կյանքը (մեծեր, որոնց մասին համարյա ոչինչ չգիտեն մեր ներկա սերունդները), որին մասնակցում էին գիտության եւ գրականության մեծ գիտակներ (Միեր Նավոյան, Աշոտ Բլեյան, Հրանուշ Խառատյան եւ ուրիշներ), հանվեց ծրագրից, տեղը եկավ ոչինչ չասող «Հասման կետը»:**

**Ոչ պակաս շնորհաշատ Գոհար Գասպարյանի «Գտնված երազը» հանվեց: Հիմա Գոհարը Արթուրի հետ գովազդում է «Արի ու տես»-ը: Գրեթե վերացել են առավոտյան վերջին լուրերը (5 րոպե), ինչպես նաեւ սեղմվել է քաղաքական մեկնաբան Գ. Ալթունյանի «Տեսանկյունը», որի առավոտյան կրկնությունը իսպառ են վերցրել: Այսինքն, կրկնելու բան էլ չկա: Իսկ ինչ վերաբերում է Էրիկի «Ազատ գոտուն», որը կրկնվում է օրական 3 անգամ, ոչինչ չի տալիս հեռուստադիտողին, չնայած որոշ թեմաների վերնագրերը գրավիչ են: Բայց չի հասնում իր նպատակին, որովհետեւ թաթերի վրա ման եկող Էրիկը չի թողնում ցասկածողը բարձրացնել: Օրինակ, երբ խոսքը Գեղարդի քարե սիմֆոնիաների գոյությանն է վերաբերում, նշում են, որ այդ քարերը տանում են առանձնատուն կառուցելու: Իսկ թե ո՞վ է կառուցում, չեն ասում: Կամ, երբ խոսում են հեռուստատեսության աշխատանքների մասին, եւ մասնակցում էր նաեւ ՀՌԱՀ անդամ Կորյուն Առաքելյանը, ոչ մի ընդդիմախոս չկար. Ամեն ինչ լավ է, ամեն ինչ հսկվում է...**

**Ժամանակը չէ՞, որ մեր մտավորականությունը նորից հավաքվի, նորից «մրցանակ» շնորհի: Այս անգամ՝ նաեւ անգործունյա ՀՌԱՀ-ին:**

**ԿԱՌԼԵՆ ՔԱԼԱՇՅԱՆ**

# Կոնգրեսը համաձայնեցրեց 2014 թ. բյուջեն



ԱՄՆ Կոնգրեսում դեմոկրատներն ու հանրապետականները վերջապես փոխզիջողական համաձայնության են հասել 2014 թ. ֆինանսական տարվա դաշնային բյուջեի պարամետրերի շուրջը, ինչը թույլ կտա խուսափել կառավարության աշխատանքի հոկտեմբերյան ընդհատման կրկնությունից: Այդ մասին հաղորդում է «Վաշինգտոն փոստ» թերթը:

Տվյալ հարցի շուրջը բանակցություն վարած դեմոկրատ Փեթթի Մյուրրեյը եւ հանրապետական Փոլ Ռայանը հայտարարել են, որ գործարքի շնորհիվ բյուջեի պակասորդը մինչեւ հաջորդ ֆինանսական տարվա վերջը կնվազի 23 մլրդ դոլարով: Ենթադրվում է դրան հասնել ոչ միայն բյուջեի առանձին հոդվածների կրճատման, այլեւ պետգանձարանի տուրքերի ավելացման հաշվին: Խոսքը մասնավորապես դաշնային ծառայողների կենսաթոշակային ֆոնդի եւ ավիափոխադրումների անվտանգության ապահովման ֆոնդի մասին է: Սպասվում է, որ վերջին միջոցառումը կհանգեցնի ԱՄՆ-ում ավիատոմսերի թանկացմանը:

Այս ձեւակերպումները 10 տարում բյուջեին կբերեն հավելյալ 85 մլրդ դոլար: Ըստ որում բյուջեի գրեթե բոլոր ծախսային հոդվածների հարկադիր կրճատում չի լինի: Ռայանը ընդգծել է, որ ամերիկացիների հարկման բազային տոկոսադրույքների բարձրացում նույնպես տեղի չի ունենա:

Հոկտեմբերի 1-ին սկսված 2014 թ. ֆինանսական տարում երկրի պաշտպանական ծախսերը կնվազեն, հասնելով 520,5 մլրդ դոլարի: Դա 6 միլիարդով պակաս է այն գումարից, որը Կոնգրեսից խնդրել էր Օբամայի վարչակազմը:

Անկախ փորձագետները 17 տրիլիոն պետական պարտքի պայմաններում բյուջեի պակասորդի 23 միլիարդ կրճատումը համարում են անբավարար: Այդուհանդերձ Մյուրրեյը եւ Ռայանը դրական են գնահատում ձեռք բերված համաձայնությունը:

2014-ի բյուջեն չէր հաջողվել ընդունել մինչեւ նոր ֆինանսական տարվա սկիզբը՝ հոկտեմբերի 1-ը: Դրա հետեւանքով հոկտեմբերի 1-16-ը հարկադիր արձակուրդի էին ուղարկվել 850 հազար դաշնային ծառայողներ, որոնց մեծ մասը կազմում էին Պենտագոնի քաղաքացիական մասնագետները:

Պ. Ք.

# Օբաման քննադատվեց Կաստրոյի ձեռքը սեղմելու համար



Հանրապետական կուսակցության ներկայացուցիչները նախագահ Բարաք Օբամային քննադատել են Նելսոն Մանդելայի հուղարկավորության ժամանակ Կուբայի ղեկավար Ռաուլ Կաստրոյի ձեռքը սեղմելու համար: Այդ մասին հաղորդում է «Լոս Անջելես թայմս» թերթը:

Կոնգրեսական Իլեանա Ռոս-Լեյտինենը պետքարտուղար Ջոն Քերրիին հարցրել է, թե Կաստրոյի «արյունոտ» ձեռքը սեղմելու Օբամայի որոշումը չի՞ նշանակում արդյոք ԱՄՆ-ի արտաքին քաղաքականության մեղմացում: Քերրին պատասխանել է, թե չի նշանակում: Սակայն Օբաման ավելի վաղ հայտարարել էր, որ ինքը մտադիր է վերանայել Կուբայի նկատմամբ վարվող քաղաքականության որոշ կողմեր:

Սենատոր Ջոն Մակքեյնը տարակուսանք է արտահայտել, թե ինչ կարիք կար սեղմել այն մարդու ձեռքը, որը բանտում պահում է ԱՄՆ քաղաքացիների: Նա Օբամայի արարքը համեմատել է բրիտանացի վարչապետ Նեւիլ Չեմբեռլենի եւ նացիստական Գերմանիայի առաջնորդ Ադոլֆ Հիտլերի 1938 թ. ձեռքսեղմումի հետ:

Կուբայական ծագումով կոնգրեսական Մարկո Ռուբիոն հայտարարել է, որ Օբաման կարող էր Կաստրոյի հետ հանդիպումն ավելի լավ օգտագործել՝ վերջինիս ասելով, որ նրա երկրում բացակայում են ժողովրդավարական ազատությունները, որոնց համար պայքարում էր Նելսոն Մանդելան:

Մանդելայի հուղարկավորության արարողությունը տեղի էր ունեցել դեկտեմբերի 10-ին Յոհաննեսբուրգում: Կաստրոն եւ Օբաման միեւնույն օթյակում էին: Միջոցառումից հետո ԱՄՆ նախագահի վարչակազմի ներկայացուցիչները հայտարարել էին, որ երկու երկրների ղեկավարների ձեռքսեղմումը եւ կարճատեւ զրույցը ծրագրված չէին եւ կրում էին ոչ պաշտոնական բնույթ:

Այդուհանդերձ դա ԱՄՆ-ի եւ Կուբայի ղեկավարների առաջին շփումն էր վերջին 13 տարում: Կոմունիստական Կուբայի առաջնորդների հետ վերջին անգամ շփվել էր նախագահ Բիլ Քլինթոնը 2000 թվականին. նա ՄԱԿ-ի գագաթաժողովում սեղմել էր Ֆիդել Կաստրոյի ձեռքը: Մինչ այդ սառը պատերազմի վիճակում եղած երկու երկրները մի քանի տասնամյակ դիվանագիտական հարաբերություններ չէին ունեցել:

# Ռուբլու խորհրդանիշը հաստատվեց



**Ռուսաստանի բանկի տնօրենների խորհուրդը հաստատել է ռուբլու խորհրդանիշը. դա Р տառն է՝ վրան հորիզոնական գծիկ: Այդ մասին հայտարարել է ԿԲ նախագահ Էլվիրա Նաբիուլլինան:**

**Ինտերֆաքս գործակալությունը նշում է, որ հանրային քննարկմանը մասնակցել է 280 հազար մարդ: Ընդունված խորհրդանիշը՝ ներկայացված հինգ տարբերակներից երկրորդը, ստացել է ձայների 61 տոկոսը:**

**Առաջին տարբերակի օգտին քվեարկել է մասնակիցների 19 տոկոսը, 3-5-րդ տարբերակները ստացել են համապատասխանաբար 5,5, 4,5 եւ 1,9 տոկոս: Հարցման մասնակիցների գրեթե 8 տոկոսը մերժել է բոլոր տարբերակները:**

ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆ ՍԱՌՈՒՅՑՆԵՐԻ ՄԵՋ

# Կանադան հավակնում է հյուսիսային բեւեռին

## *Ռուսաստանը կստեղծի արկտիկական զորքեր*



Կանադայի իշխանությունները ՄԱԿ-ին պաշտոնապես կներկայացնեն տարածքային հավակնություններ Հյուսիսային բեւեռի նկատմամբ, հաղորդում է Ասոշիեյթեդ պրես գործակալությունը: Համապատասխան հայտի նախապատրաստման մասին հայտարարել է Կանադայի արտգործնախարար Ջոն Բեյրդը:

Նրա խոսքերով, կանադացի գիտնականները պետք է ապացուցեն, որ բեւեռը մտնում է իրենց երկրի մայրցամաքային ծանծաղուտի գոտու մեջ: Դեկտեմբերի սկզբներին Կանադան ՄԱԿ-ին արդեն դիմել էր իր մայրցամաքային ծանծաղուտին 1,2 մլն քառ. կմ տարածք միացնելու խնդրանքով: Բեյրդի խոսքերով, այդ հայտը պարունակում է նախնական տեղեկատվություն, որը հետագայում թույլ կտա էլ ավելի ընդլայնել ծանծաղուտի սահմանները:

Ներկայումս հյուսիսային բեւեռը եւ կից ջրատարածքը չեն պատկանում որեւէ երկրի: Ռուսաստանը, Կանադան, Նորվեգիան, Դանիան եւ ԱՄՆ-ը Արկտիկայում ունեն բացառիկ տնտեսական գոտիներ, որոնք տարածվում են իրենց ափերից մինչեւ 370 կմ (200 մղոն) հեռավորության վրա:

Արկտիկան համարվում է օգտակար հանածոներով հարուստ շրջան: Երկրաբանները ենթադրում են, որ այնտեղ գտնվում են բնական գազի չհետախուզված համաշխարհային պաշարների 30 տոկոսը եւ նավթի չհետախուզված պաշարների 15 տոկոսը: Ավելի վաղ Ռուսաստանը եւ Դանիան նույնպես հայտարարել էին իրենց արկտիկական ծանծաղուտներն ընդլայնելու հավակնությունների մասին:

ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինը դեկտեմբերի 10-ին երկրի պաշտպանության նախարարության կոլեգիայի ընդլայնված նիստում հայտարարեց, որ 2014 թ. Ռուսաստանը հատուկ զորամասեր կձեւավորի Արկտիկա ուղարկելու համար: Նրա խոսքերով, Ռուսաստանը «այդ հեռանկարային շրջանում պետք է բոլոր լծակներն ունենա իր անվտանգության եւ ազգային շահերի պաշտպանության համար»:

BBC-ն մեջբերում է նախագահի այն հայտարարությունը, որ արդեն աշխատանքներ են կատարվում հյուսիսային մի շարք օդանավակայաններ վերականգնելու համար:

Պաշտպանության նախարար Սերգեյ Շոյգուն ասել է, որ արդեն նորոգված է եւ աշխատանքը վերսկսել է արկտիկական «Տեմպ» օդանավակայանը:

Ռուսաստանը մտադիր է զբաղվել Արկտիկայի օգտակար հանածոների մշակմամբ, ինչպես նաեւ ակտիկական նոր նավեր կառուցել եւ պահպանել սառցահատների խմբավորումը հյուսիսային ծովային ճանապարհի վրա:

Վերջերս ակտիկական հավակնությունների մասին շատ է խոսում նաեւ ԱՄՆ-ը: Նոյեմբերի վերջերին հայտնի դարձավ, որ ամերիկյան ծովուժի հրամանատարությունը մտադրվել է արագացնել այն ծրագրերի իրականացումը, որոնց նպատակն է ռազմանավեր նախապատրաստել Արկտիկայի պայմաններում գործելու համար:


## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

**ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԳՈՒՅՔԸ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՕՏԱՐՄԱՆ ԱՃՈՒՐԴԸ ԵՎ ՄՐՑՈՒՅԹԸ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՂ ՈՒ ԱՆՑԿԱՑՆՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ ՀԱՅՏԱՐԱՐՈՒՄ Է ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՆԵՐՔՈՀԻՇՅԱԼ ԳՈՒՅՔԻ ՕՏԱՐՄԱՆ ԱՃՈՒՐԴ**

| հ/հ | Գույքի անվանումը | Պետհամարանիշը | Թողարկման տարեթիվը | Մեկնարկային գինը (դրամ) |
|---|---|---|---|---|
| 1 | ՄԱԶ 5334 (ԿՍ-3577 Կռունկ) | 087 LS 63 | 1989թ | 1,800,000 |
| 2 | Ֆոլկսվագեն տուարեգ | 100 SL 08 | 2007թ | 10,440,000 |

Աճուրդին կարող են մասնակցել այն իրավաբանական և ֆիզիկական անձինք, որոնք Երևան համայնքի նկատմամբ օրենքով սահմանված կարգով ֆինանսական պարտավորություններ չունեն:

Աճուրդին մասնակցել ցանկացող անձինք աճուրդի կազմակերպման և անցկացման ընթացակարգին կարող են ծանոթանալ Երևանի քաղաքապետարանում, ինչպես նաև Երևանի քաղաքապետարանի ինտերնետային կայքում՝ WWW.YEREVAN.AM:

Աճուրդի պայմանների մանրամասներին, պայմանագրի տիպային օրինակին ծանոթանալու ու հայտ ներկայացնելու համար դիմել Երևանի քաղաքապետարան (Արգիշտիի 1, մուտքը աշտարակի կողմից, 2-րդ հարկ, հեռ. 514173):

Աճուրդին մասնակցել ցանկացողները հայտին կից ներկայացնում են տեղական վճարի՝ 10000 դրամ և մեկնարկային գնի 5%-ի չափով նախավճարի վճարման անդորրագրերը:

Աճուրդը կայանալու է 2013թ դեկտեմբերի 26-ին ժ.16.00-ին , ք. Երևան, Արգիշտիի 1 հասցեում:

Հայտերն ընդունվում են աշխատանքային օրերին՝ մինչև 2013թ դեկտեմբերի 26-ը, ժամը 14.00-ը:

*ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԳՈՒՅՔԸ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՕՏԱՐՄԱՆ ԱՃՈՒՐԴԸ ԵՎ ՄՐՑՈՒՅԹԸ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՂ ՈՒ ԱՆՑԿԱՑՆՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ*

ԿԻՆՈ

## «Կին» միջազգային 10-րդ կինոփառատոն




Դեկտեմբերի 14-18-ը Հովհ. Թումանյանի անվան պետական տիկնիկային թատրոնում կանցկացվի «Կին» միջազգային 10-րդ կինոփառատոնը:

Ավանդական դարձած կինոփառատոնի նպատակն է վերաիմաստավորել կնոջ դերը հասարակության մեջ, կինոյի միջոցով լուսաբանել նրա խնդիրները, խթանել Հայաստանում կանանց կողմից ստեղծված ֆիլմերի արտադրությունը, բացահայտել նոր անուններ, ինչպես նաեւ նպաստել մշակութային երկխոսությանը տարբեր ազգերի միջեւ:

Փառատոնի պատմության ընթացքում ներկայացվել են անվանի կին ռեժիսորներ Ելենա Սականյանի (ԽՍՀՄ), Լենի Ռիֆենշտալի (Գերմանիա), Ռուզան Ֆրանգուլյանի (Հայաստան), Բեւերլի Շաֆերի (Կանադա), Ուլրիկե Օտտինգեր (Ավստրիա), Նինա Ագաջանովայի (ԽՍՀՄ), Յանինա Լաուինսկայտեի (Լիտվա), Սյուզանն Խարդալյանի (Շվեդիա) աշխատանքները:

2011 թվականին «Կանայք նկարահանում են ֆիլմեր» ամերիկյան կազմակերպության հետ անցկացվել է երկօրյա դասընթաց կինոռեժիսորների համար, կազմակերպվել են կլոր սեղաններ:

Կինոփառատոնին մասնակցած հայկական ֆիլմերը ցուցադրվել են Լեհաստանում Կրակովի «Ֆիլմմոր» կանանց փառատոնում, Ռումինիայում «Ալտեր-Նեյտիվ» կարճամետրաժ ֆիլմերի փառատոնում, նաեւ Թուրքիայում:

«Կին» միջազգային 10-րդ հոբելյանական փառատոնի ծրագրում ներկայացված է 81 ֆիլմ 27 երկրից: Փառատոնի հետահայաց ցուցադրության ծրագրում տեղ են գտել առաջին կին ռեժիսոր, ազգությամբ ֆրանսուհի Ալիս Գի Բլաշեի ֆիլմերը: Նախատեսված են ցուցադրություններ՝ նվիրված ռեժիսոր Թամարա Լիսիցյանի 90-ամյակին եւ անգլիացի կոմպոզիտոր Բենջամեն Բրիտտենի 100-ամյակին: Թ. Լիսիցյանի «Ջելսոմինոն հրաշքների երկրում» մանկապատանեկան կինոնկարը կցուցադրվի ԹՈՒՄՈ կենտրոնում (դեկտեմբերի 16-ին, ժամը 15:30-ին), իսկ Մ. Ուիլյամսի «Պիտեր Գրայմս» ֆիլմը, որը նվիրված է Բ. Բրիտտենի ծննդյան 100ամյա հոբելյանին Երեւանի Հովհ. Թումանյանի անվան պետական տիկնիկային թատրոնում (դեկտեմբերի 16-ին, ժամը 16:00-ին):

Փառատոնի շրջանակում կներկայացվեն նաեւ Հերիքնազ Գալստյանի, Հասմիկ Ավետիսյանի, Զառա Մանուչարյանի աշխատանքները:

Հոբելյանական փառատոնի ժյուրիի կազմում ընդգրկված են Ժակլին Բուէն (Կրետեյ փառատոնի ղեկավար), Սթեֆանիա Գյորգը (կինոգետ, Դորտմունդ, Քյոլնի կանանց փառատոն), Միվակո Կիկուչին (Ճապոնական Տորտոնտս եւ Ասիա փառատոնի գեղարվեստական ղեկավար), Զավեն Ղուկասյանը (կինոգետ, Իրան), Վահրամ Մարտիրոսյանը (սցենարիստ, գրող, հրապարակախոս):

«Կին» միջազգային 10-րդ հոբելյանական փառատոնի փակման արարողությունը տեղի կունենա Գաֆեսճյան մշակութային կենտրոնի դահլիճում, ուր կցուցադրվեն Ալիս Գի Բլաշեի ֆիլմերը՝ Ա. Խաչատրյանի անվան տրիոյի նվագակցությամբ:

«Կին» կինոփառատոնը առաջին անգամ անցկացվել է 2003 թվականին. ցուցադրվել են վերջին տասնհինգ տարիներին ստեղծված հայ կին ռեժիսորների ֆիլմերը:

Փառատոնը իրականացվում է մշակույթի նախարարության եւ «Լիզա» մշակութային հիմնադրամի աջակցությամբ:

ՄԱՆԱՆԱ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ

## Ստացանք

Խմբագրությունս շնորհակալությամբ ստացավ՝

**Վարդան Օսկանյանի**

**«Անկախության ճանապարհով.**

**Փոքր երկրի մեծ մարտահրավերները. Նախարարի օրագրից**» գիրքը

Երեւան, Սիվիլիթաս հիմնադրամ, 2013 թ., 284 էջ,

«Անտարես» հրատարակչատուն:

***

**Սերգեյ Գալուստյանի**

«**Կատակերգություն ըստ Ներսես Հովհաննիսյանի**» գիրքը

ՀՀ մշակույթի նախարարություն

Հայաստանի Ազգային կինոկենտրոն

Երեւան, Վեմ-Պրինտ, 2013 թ., 196 էջ

## «Կամերատա Զալցբուրգ» նվագախումբը եւ Ցուկերմանը հիացրին հայ հանդիսականին

Երեկ Արամ Խաչատրյան համերգասրահում «Երեւանյան հեռանկարներ» 14-րդ փառատոնի փակման համերգին միասին հանդես եկան երկու գերաստղեր՝ «Կամերատա Զալցբուրգ» նվագախումբը եւ Պինկաս Ցուկերմանը: Հնչեցին՝ Ստրավինսկու Պուլչինելլա սյուիտը, Մոցարտի Հաֆներ սերենադը, Բեթհովենի Ռոմանս սոլ մաժորը եւ Մոցարտի թիվ 39 սիմֆոնիան:

Երեկ, օրվա ընթացքում Ցուկերմանը լրագրողների հետ հանդիպմանը նշեց, որ մեր օրերում առավել քան կարեւոր է երաժշտության դերը, քանի որ առանց երաժշտության շրջապատը անապատ կդառնա. «Կարեւոր է շատ, որ գալիք սերունդը երաժշտությանը մոտ կանգնած լինի, քանի որ երաժշտությունը մեծ դեր է խաղում մարդու կայացման գործում»:

Երաժշտի կարծիքով, շատ դժվար է համերգի ժամանակ դիրիժորությունից հանկարծակի անցնել



ջութակ նվագելուն: Նրա հավաստմամբ՝ դիրիժոր ընտրելն այնքան դժվար է, կարծես մեկի հետ ամուսնանաս: «Երբ հանդես ես գալիս որպես երաժիշտ՝ յուրաքանչյուրը քեզ լսում է 2-3 անգամ ավելի կենտրոնացած, բոլորը կենտրոնացած են քեզ վրա: Հեշտ չէ որպես մենակատար հանդես գալ, սակայն դա կյանքի փորձից է գալիս»:

Ուշագրավ է այն հանգամանքը, որ Ցուկերմանը 1962թ., երբ մեկնել է ԱՄՆ, սովորել է Ջուլիարդի դպրոցում՝ անվանի ուսուցիչ Իվան Գալամյանի մոտ: Գալամյանի մասին հիշելիս՝ Ցուկերմանը նշեց, որ վերջինս ոչ միայն առանձնահատուկ երաժիշտ էր, այլ նաեւ բացառիկ մարդ, որը սովորեցնում էր ոչ միայն ճիշտ նվագել, այլ նաեւ՝ ինչպես կարելի է ուսուցիչ դառնալ:

«Նրա դասերը լսելու էին գալիս բազմաթիվ հայտնի երաժիշտներ: Գալամյանը դասավանդում էր երեկոյան 7-ից մինչեւ առավոտյան ժամը 6-ը. ես ինձ Գամալյանի ավանդույթների շարունակողն եմ համարում»,- ասաց Ցուկերմանը՝ ավելացնելով, որ դասից դուրս նրա հետ զրուցում էին նաեւ Հայաստանի եւ հայերի մասին. «Առհասարակ, Հայաստանը լուսավոր երկիր է, ձեր գինին ու ճաշատեսակները շատ սիրեցի, հանդիսատեսին նույնպես: Նկատեցի, որ օդանավակայանը վերանորոգվել է, հաճելի էր: Այնպես որ՝ բոլոր պատճառները կան իմ՝ հաջորդ այցը կազմակերպելու համար»:

Ս. Հ.

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

**ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԳՈՒՅՔԸ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՕՏԱՐՄԱՆ ԱՃՈՒՐԴԸ ԵՎ ՄՐՑՈՒՅԹԸ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՂ ՈՒ ԱՆՑԿԱՑՆՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ ՀԱՅՏԱՐԱՐՈՒՄ Է ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՆԵՐՔՈՀԻՇՅԱԼ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ**

| հ/հ | Գույքի հասցեն (գտնվելու վայրը) | Գույքի մակերեսը | Գույքի օգտագործման նպատակը | Վարձակալության տրամադրման ժամկետը | Մեկնարկային գինը (վարձավճարի չափը 1 ամսվա համար) |
|---|---|---|---|---|---|
| *Աճուրդով վարձակալության տրամադրվող գույք* | | | | | |
| 1 | Արմենակյան փողոց հ.141, 2-րդ հարկ | 7.9 | հասարակական | 5 տարի | 7900 դրամ |

Աճուրդին կարող են մասնակցել իրավաբանական եւ ֆիզիկական այն անձիք, ովքեր Երեւան համայնքի բյուջեյի նկատմամբ օրենքով սահմանված կարգով ֆինանսական պարտավորություններ չունեն:

Աճուրդին մասնակցել ցանկացող անձինք աճուրդի կազմակերպման եւ անցկացման ընթացակարգին կարող են ծանոթանալ Երեւանի քաղաքապետարանում, ինչպես նաեւ Երեւանի քաղաքապետարանի ինտերնետային կայքում՝ WWW.YEREVAN.AM:

Աճուրդի պայմանների մանրամասներին, պայմանագրի տիպային օրինակին ծանոթանալու ու հայտ ներկայացնելու համար դիմել Երեւանի քաղաքապետարան (Արգիշտի 1, մուտքը աշտարակի կողմից, 2-րդ հարկ, հեռ. 514173):

Աճուրդին մասնակցել ցանկացողները հայտին կից ներկայացնում են տեղական վճարի՝ 10000 դրամ եւ մեկնարկային գնի 5%-ի չափով նախավճարի վճարման անդորրագրերը:

Աճուրդը կայանալու է 2013թ դեկտեմբերի 26-ին ժամը16-ին, ք. Երեւան, Արգիշտի 1 հասցեում:

Հայտերն ընդունվում են աշխատանքային օրերին՝ մինչեւ 2013թ դեկտեմբերի 26-ը, ժամը14-ը:

*ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԳՈՒՅՔԸ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՕՏԱՐՄԱՆ ԱՃՈՒՐԴԸ ԵՎ ՄՐՑՈՒՅԹԸ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՂ ՈՒ ԱՆՑԿԱՑՆՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ*

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

**ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԳՈՒՅՔԸ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՕՏԱՐՄԱՆ ԱՃՈՒՐԴԸ ԵՎ ՄՐՑՈՒՅԹԸ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՂ ՈՒ ԱՆՑԿԱՑՆՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ ՀԱՅՏԱՐԱՐՈՒՄ Է ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՆԵՐՔՈՀԻՇՅԱԼ ԳՈՒՅՔԻ ՕՏԱՐՄԱՆ ԱՃՈՒՐԴ**

| հ/հ | Գույքի հասցեն (գտնվելու վայրը) | Գույքի օգտագործման նպատակը | Շինության մակերեսը /քմ/ | Մեկնարկային գինը (դրամ) |
|---|---|---|---|---|
| 1 | Սիսակյան փողոց 22 շենք, թիվ 1 | Ավտոկայանատեղի | 13.23 | 1,692,000 |
| 2 | Սիսակյան փողոց 22 շենք, թիվ 2 | Ավտոկայանատեղի | 14.46 | 1,827,000 |
| 3 | Սիսակյան փողոց 22 շենք, թիվ 3 | Ավտոկայանատեղի | 14.46 | 1,827,000 |
| 4 | Սիսակյան փողոց 22 շենք, թիվ 4 | Ավտոկայանատեղի | 14.46 | 1,827,000 |
| 5 | Սիսակյան փողոց 22 շենք, թիվ 5 | Ավտոկայանատեղի | 14.46 | 1,827,000 |
| 6 | Սիսակյան փողոց 22 շենք, թիվ 6 | Ավտոկայանատեղի | 13.48 | 1,710,000 |
| 7 | Սիսակյան փողոց 22 շենք, թիվ 7 | Ավտոկայանատեղի | 14.46 | 1,827,000 |
| 8 | Սիսակյան փողոց 22 շենք, թիվ 8 | Ավտոկայանատեղի | 14.46 | 1,827,000 |
| 9 | Սիսակյան փողոց 22 շենք, թիվ 9 | Ավտոկայանատեղի | 14.46 | 1,827,000 |
| 10 | Սիսակյան փողոց 22 շենք, թիվ 10 | Ավտոկայանատեղի | 14.46 | 1,827,000 |
| 11 | Սիսակյան փողոց 22 շենք, թիվ 11 | Ավտոկայանատեղի | 14.46 | 1,827,000 |
| 12 | Սիսակյան փողոց 22 շենք, թիվ 12 | Ավտոկայանատեղի | 14.46 | 1,827,000 |
| 13 | Սիսակյան փողոց 22 շենք, թիվ 13 | Ավտոկայանատեղի | 14.46 | 1,827,000 |
| 14 | Սիսակյան փողոց 22 շենք, թիվ 14 | Ավտոկայանատեղի | 14.46 | 1,827,000 |
| 15 | Սիսակյան փողոց 22 շենք, թիվ 15 | Ավտոկայանատեղի | 19.98 | 2,547,000 |
| 16 | Սիսակյան փողոց 22 շենք, թիվ 16 | Ավտոկայանատեղի | 19.98 | 2,547,000 |
| 17 | Սիսակյան փողոց 22 շենք, թիվ 17 | Ավտոկայանատեղի | 19.98 | 2,547,000 |
| 18 | Սիսակյան փողոց 22 շենք, թիվ 18 | Ավտոկայանատեղի | 19.98 | 2,547,000 |
| 19 | Սիսակյան փողոց 22 շենք, թիվ 19 | Ավտոկայանատեղի | 20.29 | 2,592,000 |
| 20 | Սիսակյան փողոց 22 շենք, թիվ 20 | Ավտոկայանատեղի | 19.98 | 2,547,000 |
| 21 | Սիսակյան փողոց 22 շենք, թիվ 21 | Ավտոկայանատեղի | 19.98 | 2,547,000 |
| 22 | Սիսակյան փողոց 22 շենք, թիվ 22 | Ավտոկայանատեղի | 19.98 | 2,547,000 |
| 23 | Սիսակյան փողոց 22 շենք, թիվ 23 | Ավտոկայանատեղի | 19.98 | 2,547,000 |
| 24 | Սիսակյան փողոց 22 շենք, թիվ 24 | Ավտոկայանատեղի | 19.98 | 2,547,000 |
| 25 | Սիսակյան փողոց 22 շենք, թիվ 25 | Ավտոկայանատեղի | 19.98 | 2,547,000 |

Աճուրդին կարող են մասնակցել այն իրավաբանական և ֆիզիկական անձինք, որոնք Երևան համայնքի նկատմամբ օրենքով սահմանված կարգով ֆինանսական պարտավորություններ չունեն:

Աճուրդին մասնակցել ցանկացող անձինք աճուրդի կազմակերպման և անցկացման ընթացակարգին կարող են ծանոթանալ Երևանի քաղաքապետարանում, ինչպես նաև Երևանի քաղաքապետարանի ինտերնետային կայքում՝ WWW.YEREVAN.AM:

Աճուրդի պայմանների մանրամասներին, պայմանագրի տիպային օրինակին ծանոթանալու ու հայտ ներկայացնելու համար դիմել Երևանի քաղաքապետարան (Արգիշտի 1, մուտքը աշտարակի կողմից, 2-րդ հարկ, հեռ. 514173):

Աճուրդին մասնակցել ցանկացողները հայտին կից ներկայացնում են տեղական վճարի՝ 10000 դրամ և մեկնարկային գնի 5%-ի չափով նախավճարի վճարման անդորրագրերը:

Աճուրդը կայանալու է 2013թ դեկտեմբերի 26-ին ժ.16.00-ին, ք. Երևան, Արգիշտի 1 հասցեում:

Հայտերն ընդունվում են աշխատանքային օրերին՝ մինչև 2013թ. դեկտեմբերի 26-ը, ժամը 14.00-ը:

*ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԳՈՒՅՔԸ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՕՏԱՐՄԱՆ ԱՃՈՒՐԴԸ ԵՎ ՄՐՑՈՒՅԹԸ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՂ ՈՒ ԱՆՑԿԱՑՆՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ*

# Մարզական

## Սյուզի Քենտիկյանը դատի է տալու իրեն զրպարտողներին

WBA-ի վարկածով թեթեւագույնքաշային կարգում աշխարհի չեմպիոնուհի Սյուզի Քենտիկյանը aravot.am-ին տված հարցազրույցում հայտնել է, որ Հայաստանում իրեն զրպարտող տեղեկություններ են տարածում, ինչի կապակցությամբ պատրաստվում է դատի տալ:



«Տեսնում եմ, որ իմ հաղթանակները Հայաստանում ոչ բոլորի սրտով են: Համացանցում իմ հասցեին մի զրպարտություն կարդացի, որից խիստ վրդովվել եմ ու տեղս չեմ գտնում: Չեմ հասկանում, թե ո՞վ է այդ անձնավորությունը, որ որոշել է կեղտոտ միջոցներով վիրավորել արժանապատվությունս՝ գրելով իբր ապրում եմ չեչենի հետ ու ընդունել եմ նրանց կրոնը: Ի՞նչ նպատակ է հետապնդում: Նա մի բան քաջ գիտակցել է. իր արածը դասական զրպարտության օրինակ է: Դրա համար էլ վախեցել է հերյուրանքի տակ իր իսկական անուն-ազգանունը դնել: Բայց ուզում եմ, որ այդ մարդուկը իմանա. ես սա անպատասխան չեմ թողնի: Հիմա հարազատներիս ու մտերիմներիս հետ զբաղված ենք փաստաբան վարձելով, հայտնաբերելու ենք նրան ու դատի ենք տալու:

Նա պիտի պատասխան տա արժանապատվությունս վիրավորելու համար: Ես ցանկանում էի հաղթանակից հետո գալ Հայաստան եւ առաջին անգամ Ամանորն ու Սուրբ Ծնունդը նշել հարազատներիս հետ: Բայց այնքան եմ վիրավորված, որ մտադրությունս փոխել եմ: Այ, երբ այդ սրիկային կգտնեմ, ինչով արդեն զբաղվողներ կան, անպայման կգամ: Ես Գերմանիայում տարբեր ազգերի ու հավատքի բազմաթիվ ընկերներ ունեմ, որոնց հետ ամեն օր շփվում ենք: Ես նրանց եմ սիրում, նրանք՝ ինձ: Ի՞նչ է, պիտի գրեն, թե ես բոլորի հետ էլ ամուսնացա՞ծ եմ: Մեր պրոմոութերական ընկերությունում թուրքեր էլ կան, որոնք ինձ պաշտպան են կանգնում, եթե որեւէ մեկը փորձում է ինձ նեղացնել»:

## Ռոնալդուն հերթական ռեկորդը սահմանեց



Չեմպիոնների լիգայի A, B, C եւ D խմբերում կայացան խմբային մրցաշարի ավարտական տուրի հանդիպումները:

A խմբում կենտրոնականը «Մանչեսթր Յունայթեդի» եւ Դոնեցկի «Շախտյորի» հանդիպումն էր: Խաղի ելքը վճռեց 67-րդ րոպեին Ջոնսի խփած միակ գնդակը, որը հաղթանակ պարգեւեց դաշտի տերերին: Այդ պարտությունը թանկ նստեց «Շախտյորի» վրա, որը դուրս մնաց չեմպիոնների լիգայի մրցաշարից: Միրչա Լուչեսկուի սաները պայքարը կշարունակեն Եվրոպայի լիգայում: Իսկ 2-րդ ուղեգրին տիրեց Լեւերկուզենի «Բայերը», որը հյուրընկալվելիս 1-0 հաշվով հաղթեց խմբի հետնապահ «Ռեալ Սոսյեդադին»:

B խմբում կայացավ միայն մեկ հանդիպում: Ստամբուլում տեղի «Գալաթասարայի» եւ Թուրինի «Յուվենտուսի» մրցախաղն առատ ձյան պատճառով 32-րդ րոպեին դադարեցվեց: Այդ պահին հաշիվը 0-0 էր: Խաղը շարունակվեց հաջորդ օրը: «Գալաթասարայը» հաղթեց 1-0 հաշվով եւ դուրս եկավ հաջորդ փուլ:

Իսկ խմբի առաջատար Մադրիդի «Ռեալը» Կոպենհագենում հերթական հաղթանակը տոնեց՝ 2 անպատասխան գնդակ ուղարկելով դանիական թիմի դարպասը: Գոլերից մեկն իր հաշվին գրանցեց Քրիշտիանու Ռոնալդուն: Նա կարող էր նաեւ 2-րդ գոլը խփել, սակայն խաղավերջում չիրացրեց 11 մ հարվածը: Ռոնալդուն չեմպիոնների լիգայի խմբային մրցաշարում իր 9-րդ գնդակը խփեց, ինչն արդյունավետության նոր ռեկորդ է: Նախկինում խմբային մրցաշարում բոլորից շատ՝ 8-ական գնդակ էին խփել Զլատան Իբրահիմովիչը, Հեռնան Կրեսպոն, Ռուդ վան Նիստելռոյը եւ Ֆիլիպո Ինձագին:

C խմբում ՊՍԺ-ն ժամկետից շուտ իր համար ապահովել էր 1/8 եզրափակիչի ուղեգիրը, ուստի «Բենֆիկայի» հետ հանդիպման արդյունքը ֆրանսիական ակումբի համար այլեւս նշանակություն չուներ: Իսկ ահա դաշտի տերերի համար արդյունքը կարեւոր էր: «Բենֆիկան» հաղթեց 2-1 հաշվով, սակայն 2-րդ ուղեգրին խփած եւ բաց թողած գնդակների ավելի լավ տարբերության շնորհիվ արժանացավ հունական «Օլիմպիակոսը», որը 3-1 հաշվով պարտության մատնեց բելգիական «Անդերլեխտին»: «Բենֆիկան» պայքարը կշարունակի Եվրոպայի լիգայում:

D խմբում վաղուց ուղեգրերին տիրել էին Մյունխենի «Բավարիան» եւ «Մանչեսթր Սիթին»: Մյունխենում կայացած այդ թիմերի մրցավեճը դրամատիկ ավարտ ունեցավ: Դաշտի տերերն արդեն 12-րդ րոպեին Մյուլլերի ու Գյոտցեի խփած գոլերի շնորհիվ խաղը շահում էին 2-0 հաշվով: Սակայն հյուրերը հետագայում 3 գոլ խփեցին եւ ընդհատեցին չեմպիոնների լիգայի մրցաշարում «Բավարիայի» 10 անընդմեջ հաղթանակների ռեկորդային շարքը:

Եվրոպայի լիգայի ուղեգրի համար պայքարում չեխական «Վիկտորիան» 2-1 հաշվով հաղթեց Մոսկվայի ԲԿՄԱ-ին: Ընդ որում դաշտի տերերը հաղթական գնդակը խփեցին խաղի վերջին րոպեին: Իսկ մինչեւ 65-րդ րոպեն ԲԿՄԱ-ն հաղթում էր 1-0 հաշվով:

## Ֆետելի սաղավարտը վաճառվեց աճուրդում

«Ֆորմուլա-1»-ի «Ռեդ Բուլ» թիմի ավտոարշավորդ Սեբաստիան Ֆետելի սաղավարտն աճուրդում վաճառվել է ռեկորդային՝ 72 հազար 100 ֆունտ ստեռլինգով: Բարեգործական այդ աճուրդում վաճառքի էր հանվել այն սաղավարտը, որով Ֆետելը հանդես էր եկել Գերմանիայի Գրան պրիում: Այս տարի «Ֆորմուլա-1» դասի ավտոմրցավազքի աշխարհի չեմպիոնի տիտղոսը 4-րդ անգամ նվաճած գերմանացի մարզիկը նշել է, որ այդ սաղավարտն իր համար ամենասիրելիներից էր:

## Եվգենիա Դոլուխանովան 2-րդն է

Ռուսաստանի Նեբուգ քաղաքում անցկացված շախմատի ՌԴ գավաթի կայծակնային մրցաշարում Եվգենիա Դոլուխանովան 11 հնարավորից վաստակած 8,5 միավորով գրավեց 2-րդ տեղը: Նա 1,5 միավորով զիջեց մրցաշարի հաղթող Անաստասիա Բոդնարուկին: Վերջինիս հետ պարտիան Դոլուխանովան ավարտեց ոչ-ոքի: Միակ պարտությունը հայ շախմատիստուհին կրեց 6-րդ տուրում՝ զիջելով Վլադա Սվիրիդովային:

### ԹԵՆԻՍ

## Անի Ամիրաղյանը շարունակեց հաղթարշավը

Հայ թենիսիստուհի Անի Ամիրաղյանը շարունակում է հաջող ելույթները Հնդկաստանի Նավի Մումբայ քաղաքում ընթացող թենիսի մրցաշարում: Նա հերթական հաղթանակը տոնեց ուկրաինուհի Աննա Շկուդունի նկատմամբ (7-6, 4-6, 6-3): Հաջորդ փուլում Ամիրաղյանը մրցեց բրիտանացի Ջեյդ Ուինդլիի հետ: Թեեւ մրցակցուհին դասակարգման ցուցակում զգալիորեն գերազանցում էր Անիին, սակայն հայ թենիսիստուհին շահեց մրցախաղը (6-4, 2-6, 6-4) ու մտավ քառորդ եզրափակիչ:

## Սամվել Տեր-Սահակյանը գլխավորեց աղյուսակը

Հնդկաստանի շախմատի մրցաշարի 6-րդ տուրում հաղթելով Մարաս Զումաեւին, Սամվել Տեր-Սահակյանը 5 միավորով Յացեկ Ստոպայի հետ գլխավորեց աղյուսակը:

Վահե Բաղդասարյանը հաղթելով Հովիկ Հայրապետյանին, վաստակեց 4,5 միավոր: Հայրապետյանը, Բաբուջյանն ու Տիգրան Ս. Պետրոսյանն ունեն 3,5-ական միավոր: Մարիա Գեւորգյանը վաստակել է 2,5 միավոր:

## Ղարամյանն առայժմ անպարտելի է

Լոնդոնի շախմատի մրցաշարի 4-րդ տուրում Տիգրան Ղարամյանը հաշտություն կնքեց Սաչդեւ Տանիայի հետ եւ 3 միավորով ընթանում է 12-րդ տեղում: 4-ական միավորով առաջատարներն են Անդրեյ Իստրատեսկուն եւ Էմիլ Սուտովսկին:

## Ճակատագրական պարտություն

Բրազիլահայ գրոսմայստեր Գրիգոր-Սեւակ Մխիթարյանը Կոլումբիայի Բոգոտա քաղաքում անցկացված շախմատի մրցաշարում 9 հնարավորից վաստակած 7 միավորով գրավեց 10-րդ տեղը: Նա ընդամենը կես միավոր զիջեց մրցաշարի հաղթող, ռուսաստանցի Եվգենի Ռոմանովին, որը լրացուցիչ գործակիցներով առաջ անցավ նույնպիսի արդյունքի հասած Անտոնիո Նեւիայից, Ալոնսո Բակալարոյից եւ Ռենիեր Գոնսալեսից:

Հայ շախմատիստը մրցաշարում միայն մեկ պարտություն կրեց՝ մեկնարկում զիջելով պերուացի Ֆեռնանդո Ֆեռնանդեսին: Հենց այդ պարտությունն էլ Մխիթարյանին զրկեց գլխավոր մրցանակը շահելու հնարավորությունից:

## Կասպարովը վերադարձավ «Միկա»




Հայաստանի ազգային հավաքականի փորձառու դարպասապահ Գեւորգ Կասպարովը մեկամյա ընդմիջումից հետո կրկին հանդես կգա հարազատ «Միկայում»: Նա մինչեւ 2014-ի օգոստոսի 1-ը պայմանագիր է կնքել ակումբի հետ:

Կասպարովը «Միկայից» հեռացել էր 2012-ի ձմռանը՝ տեղափոխվելով Իրանի «Զոբ Ահան»: Նա թիմի հիմնական դարպասապահն էր: Սակայն «Զոբ Ահանի» նոր գլխավոր մարզիչը Կասպարովին չէր ընդգրկում հիմնական կազմում: Այդ պատճառով էլ Կասպարովը որոշեց խզել պայմանագիրն իրանական թիմի հետ ու վերադարձավ Հայաստան:

Նշենք, որ Կասպարովի ծառայություններով Հայաստանում հետաքրքրված էին նաեւ «Արարատն» ու «Ալաշկերտը»:

«Միկան» հրաժարվել է Արեգ Ազատյանի ծառայություններից: Նրա պայմանագրի ժամկետն ավարտվում էր 2014-ի ամռանը: Երկկողմ համաձայնությամբ պայմանագիրը խզվել է: Պատճառաբանությունն այն է, որ Ազատյանը մոտ մեկ տարի չի կարողանում ապաքինվել վնասվածքից, որի պատճառով ընթացիկ առաջնությունում ընդամենը 8 խաղ է անցկացրել:

## «Շիրակի» պաշտպանը մեկնել է Թուրքիա

«Շիրակի» կոտդիվուարցի պաշտպան Դիդիե Կադիո Բորիսը մեկնել է Անթալիա, որտեղ կմիանա ուսումնամարզական հավաք անցկացնող ղազախական «Կայսարին»: Նա Անթալիայում կմարզվի մինչեւ դեկտեմբերի 23-ը:

## «Արարատը» վերանայում է պայմանագրերը

Ֆուտբոլի Հայաստանի առաջնության առաջատար Երեւանի «Արարատը» սկսել է պայմանագրերի վերանայման գործընթացը: Երկկողմ համաձայնությամբ խզվել են պայմանագրերն Անդրանիկ Սարգսյանի, Գեւորգ Օհանյանի, դարպասապահ Արսեն Պետրոսյանի եւ պաշտպան Հովհաննես Գրիգորյանի հետ: Իսկ ահա կիսապաշտպան Տիգրան Ոսկանյանի հետ պայմանագրի ժամկետը երկարաձգվել է մինչեւ հաջորդ տարվա մայիս:

Թիմի ղեկավարությունը մտադիր է զգալիորեն ուժեղացնել «Արարատի» կազմը ինչպես տեղացի, այնպես էլ օտարերկրացի ֆուտբոլիստներով, որպեսզի առաջնությունն ավարտեն 1-ին հորիզոնականում: Հիշեցնենք, որ 14 տուրից հետո «Արարատը» 30 միավորով վստահորեն գլխավորում է աղյուսակը՝ 8 միավորով գերազանցելով 2-րդ տեղում ընթացող «Շիրակին»:

*Էջը պատրաստեց* ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ

# ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

## ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԳՈՒՅՔԸ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՕՏԱՐՄԱՆ ԱՃՈՒՐԴԸ ԵՎ ՄՐՑՈՒՅԹԸ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՂ ՈՒ ԱՆՑԿԱՑՆՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ ՀԱՅՏԱՐԱՐՈՒՄ Է ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՆԵՐՔՈՀԻՇՅԱԼ ԳՈՒՅՔԻ ՕՏԱՐՄԱՆ ԱՃՈՒՐԴ

| հ/հ | Գույքի հասցեն (գտնվելու վայրը) | Գույքի օգտագործման նպատակը | Հողամասի մակերեսը /քմ/ | Շինության մակերեսը /քմ/ | Մեկնարկային գինը /դրամ/ |
|---|---|---|---|---|---|
| 1 | Բաշինջաղյան փողոց 192/6 | կաթսայատուն | 155.92 | 137.98 | 6,300,000 |
| 2 | Կոմիտասի պողոտա 34/5 | կաթսայատուն | 290.22 | 258.82 | 22,100,000 |
| 3 | Գյուրջյան 15/19 | կաթսայատուն | 5,992.14 | 703.01 | 94,800,000 |
| 4 | Շեւչենկոյի փ. 34/3 | կաթսայատուն | 526.73 | 326.07 | 17,250,000 |
| 5 | Խաղաղ Դոնի փող. 27/4 | կաթսայատուն | 307.44 | 342.50 | 17,700,000 |
| 6 | Ն.Շենգավիթ 9փ., 2/3 | կաթսայատուն | 316.18 | 286.76 | 6,100,000 |
| 7 | Տիտոգրադյան փող. 1/9 | կաթսայատուն | 161.00 | 161.00 | 9,350,000 |
| 8 | Գաջեգործների փող. 74/2 | կաթսայատուն | 125.05 | 125.05 | 3,800,000 |
| 9 | Արցախի փողոց 8/13 | կաթսայատուն | 439.06 | 439.06 | 25,500,000 |
| 10 | Էրեբունի 1 | կաթսայատուն | 240.72 | 240.72 | 10,800,000 |
| 11 | Էրեբունի փողոց 29/1 | կաթսայատուն | 262.30 | 262.30 | 7,350,000 |
| 12 | Շահվերդյան 18, ԿԶՀ 31 | կաթսայատուն | 254.27 | 236.60 | 16,350,000 |
| 13 | Շիրակի 2 նրբ., 4/1 | կաթսայատուն | 206.00 | 152.87 | 6,150,000 |
| 14 | Իսակովի պող., 52/27 | կաթսայատուն | 158.76 | 158.76 | 6,850,000 |
| 15 | Գ. Մահարու 39/9 | կաթսայատուն | 328.00 | 328.00 | 9,050,000 |
| 16 | Թեյշեբանի 1 շենք | Կաթսայատուն | 21035 | 753.1 | 401,760,000 |
| 17 | Նոր Նորք 8-րդ մ/շ Մինսկի փողոց 5/8 ՇԶԿ | Կաթսայատուն | 24671.48 | 3166.7 | 609,550,000 |
| 18 | Ծերենցի փողոց 3/3 | կաթսայատուն | 158.76 | 141.36 | 9,400,000 |
| 19 | Բագրատունյաց 49 | կաթսայատուն | 237.46 | 209.56 | 21,300,000 |
| 20 | Բաղրամյան 1 փակ. 14 շենք h.163 տարածք | ոչ բնակելի տարածք | | 42.00 | 13,950,000 |
| 21 | Ն.Չարբախ 3-րդ փողոց 58/4 | շինություն | 41.65 | 33.07 | 2,250,000 |
| 22 | Անդրանիկի 10/1 շենք թիվ 57 | ոչ բնակելի տարածք | | 154.50 | 10,500,000 |
| 23 | Սիլիկյան թաղ. 10 փողոց 44 շին | շինություն | 1058.71 | 271.31 | 15,600,000 |
| 24 | Իսակովի 50/16 | կաթսայատուն | 101.76 | 84.56 | 4,450,000 |
| 25 | Լեփսիուսի 6փող. 37շ. 46շին | ոչ բնակելի տարածք | | 39.3 | 4,250,000 |
| 26 | Թումանյան 11 շենք 72 շին | ոչ բնակելի տարածք | | 10.3 | 1,000,000 |
| 27 | Աբովյան փողոց 62 շենք h.31 | ոչ բնակելի տարածք | | 40.95 | 10,550,000 |
| 28 | Բագրատունյաց 22/6 | Կաթսայատուն | 284.82 | 252.84 | 16,700,000 |
| 29 | Շեւչենկոյի 4/4 | Կաթսայատուն | 150 | 131.04 | 5,600,000 |
| 30 | Անդրանիկի 122/1 | Կաթսայատուն | 384.75 | 281.75 | 20,070,000 |
| 31 | Սուրենյանց փողոց Մեղիկ 2 | Կաթսայատուն | 352.2 | 262.7 | 18,500,000 |
| 32 | Նորք Մարաշ 9-րդ փողոց 121/1 | Կաթսայատուն | 105.6 | 89.6 | 6,350,000 |
| 33 | Մայիսի 9 փողոց 13/3 | կաթսայատուն | 148.75 | 139.15 | 6,950,000 |
| 34 | Սասունցի Դավիթ 13 | կաթսայատուն | 122.7 | 104.46 | 8,500,000 |
| 35 | Չարենցի 76/6 | կաթսայատուն | 54.82 | 42.04 | 8,600,000 |
| 36 | Քաջազնունու 11 շենք 111 | ոչ բնակելի տարածք | | 350.8 | 14,170,000 |
| 37 | Դավթաշեն ՇԶԿ h. 3 | Կաթսայատուն | 20,891.14 | 2,402.60 | 139,300,000 |
| 38 | Չարենցի փողոց թիվ 76/5 | կաթսայատուն | 2,251.36 | 1,244.00 | 363,900,000 |
| 39 | Լենինգրադյան փողոց 38/4 | Կաթսայատուն | 219.15 | 161 | 9,495,000 |
| 40 | Արտաշիսյան 3 նրբ 26/3 | Կաթսայատուն | 168.32 | 143.37 | 3,420,000 |
| 41 | Արտաշիսյան 60/3 | Կաթսայատուն | 220 | 193.29 | 3,780,000 |
| 42 | Գուլակյան 16բ | Կաթսայատուն | 203 | 203 | 12,420,000 |
| 43 | Անդրանիկի փ. 40/3 | Կաթսայատուն | 337.28 | 287.92 | 19,350,000 |
| 44 | Էրեբունի 14/4 | Կաթսայատուն | 170.18 | 145.68 | 8,838,000 |
| 45 | Շիրակի փ.6/10 | Կաթսայատուն | 309.50 | 207.98 | 12,798,000 |
| 46 | Ա.Սարգսյան 5/2 | Կաթսայատուն | 127.40 | 99.18 | 5,400,000 |
| 47 | Հալաբյան 41/3 | Կաթսայատուն | 257.12 | 161.46 | 9,090,000 |
| 48 | Սեւակի 7/6 | Կաթսայատուն | 190.29 | 139.20 | 10,260,000 |
| 49 | Սմբատ Զորավարի 42/3 | Կաթսայատուն | 262.26 | 217.11 | 11,385,000 |
| 50 | Ֆուրմանովի 1/1 | Կաթսայատուն | 295.85 | 278.97 | 14,940,000 |
| 51 | Զեյթուն 3 թաղ. Լեփսիուսի փող. 37/6 | Կաթսայատուն | 194.78 | 163.74 | 9,000,000 |
| 52 | Արշակունյաց պող. 32/4 | Կաթսայատուն | 138.17 | 101.13 | 9,810,000 |
| 53 | Հ.Էմինի 80/2 | Կաթսայատուն | 214.46 | 180.31 | 10,935,000 |
| 54 | Մամիկոնյանց 41 շենք 6 բնակարան | բնակարան | | 122.50 | 30,690,000 |
| 55 | Մամիկոնյանց 41 շենք 10 բնակարան | բնակարան | | 69.80 | 17,910,000 |
| 56 | Գ-3 թաղամաս h.41 | անավարտ շինություն | 1,021.93 | 1,919.98 | 37,440,000 |
| 57 | Նուբարաշեն 2ա շենք 26 շինություն | ոչ բնակելի տարածք | | 118.51 | 10,143,000 |
| 58 | Արտաշիսյան պ., 3 նրբ. 26/2 | Կաթսայատուն | 141.75 | 117.06 | 3,033,000 |
| 59 | Շերամի 23/4 | Կաթսայատուն | 318.72 | 292.82 | 14,310,000 |
| 60 | Հ Հակոբյան 1/7 | Կաթսայատուն | 108.80 | 108.80 | 18,000,000 |
| 61 | Այասի փողոց թիվ 1/3 | Կաթսայատուն | 414.50 | 305.70 | 19,800,000 |
| 62 | Բաղրամյան 2 փակուղի 10/1 | Կաթսայատուն | 148.85 | 125.44 | 16,200,000 |
| 63 | Մամիկոնյանց փող. 56/9 | Կաթսայատուն | 218.24 | 260.50 | 31,545,000 |
| 64 | Դավթաշեն 4 թաղ. ԿԶՀ 2 | Կաթսայատուն | 247.00 | 216.00 | 16,290,000 |
| 65 | Դավթաշեն 4 թաղ. ԿԶՀ 3 | Կաթսայատուն | 265.50 | 212.30 | 18,000,000 |
| 66 | Հալաբյան 27շ. 75 տարածք | ոչ բնակելի տարածք | | 56.70 | 2,970,000 |
| 67 | Պուշկինի 44 | ոչ բնակելի տարածք | | 16.80 | 1,980,000 |
| 68 | Մաշտոցի 20 | ոչ բնակելի տարածք | | 37.80 | 5,670,000 |
| 69 | Զաքյան փողոց 1շենք 38 տարածք | ոչ բնակելի տարածք | | 58.10 | 6,660,000 |
| 70 | Կաթսայատուն Նոր Արեշի 1/25 | կաթսայատուն | 195.50 | 195.50 | 7,470,000 |
| 71 | Խաղաղ Դոնի փող. 7/8 | կաթսայատուն | 312.78 | 348.10 | 18,270,000 |
| 72 | Աթոյան փողոց անցուղի 18/3 | կաթսայատուն | 441.95 | 441.95 | 15,840,000 |
| 73 | Ռուբինյանց փողոց թիվ 24/1 | կաթսայատուն | 158.72 | 158.72 | 8,865,000 |
| 74 | Սեբաստիա 18/2 | կաթսայատուն | 194.83 | 173.00 | 7,830,000 |
| 75 | Վիլնյուսի փող.,67/2 | կաթսայատուն | 242.50 | 212.75 | 6,030,000 |
| 76 | Կուրղինյան 5/3 | կաթսայատուն | 162.97 | 135.50 | 6,750,000 |
| 77 | Սաֆարյան 16/4 կաթսայատուն | կաթսայատուն | 306.25 | 288.00 | 11,160,000 |
| 78 | Մոլդովական փողոց 50/9 | կաթսայատուն | 192.66 | 163.10 | 7,965,000 |
| 79 | Հ/Ա Բ-2 թաղ. 92 շենքի h.20 | ոչ բնակելի տարածք | | 58.70 | 4,374,000 |
| 80 | Բաղրամյան 30 շենքի տարածք | ոչ բնակելի տարածք | | 89.70 | 12,690,000 |
| 81 | Նալբանդյան 50 շենքի տարածք | ոչ բնակելի տարածք | | 14.00 | 1,530,000 |
| 82 | Մամիկոնյանց 1/3 | կաթսայատուն | 307.20 | 280.90 | 21,510,000 |
| 83 | Դավթաշեն 2 թաղ. ԿԶՀ 1 | կաթսայատուն | 237.12 | 206.60 | 11,340,000 |
| 84 | Չեխովի 48/4 | կաթսայատուն | 160.25 | 131.30 | 11,475,000 |

Աճուրդին կարող են մասնակցել այն իրավաբանական և ֆիզիկական անձինք, որոնք Երևան համայնքի նկատմամբ օրենքով սահմանված կարգով ֆինանսական պարտավորություններ չունեն:

Աճուրդին մասնակցել ցանկացող անձինք աճուրդի կազմակերպման և անցկացման ընթացակարգին կարող են ծանոթանալ Երևանի քաղաքապետարանում, ինչպես նաև Երևանի քաղաքապետարանի ինտերնետային կայքում՝ WWW.YEREVAN.AM:

Աճուրդի պայմանների մանրամասներին, պայմանագրի տիպային օրինակին ծանոթանալու ու հայտ ներկայացնելու համար դիմել Երևանի քաղաքապետարան (Արգիշտի 1, մուտքը աշտարակի կողմից, 2-րդ հարկ, հեռ. 514173):

Աճուրդին մասնակցել ցանկացողները հայտին կից ներկայացնում են տեղական վճարի՝ 10000 դրամ և մեկնարկային գնի 5%-ի չափով նախավճարի վճարման անդորրագրերը:

Աճուրդը կայանալու է 2013թ դեկտեմբերի 26-ին ժ.16.00-ին, ք. Երևան, Արգիշտի 1 հասցեում:

Հայտերն ընդունվում են աշխատանքային օրերին՝ մինչև 2013թ դեկտեմբերի 26-ը, ժամը 14.00-ը:

***ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԳՈՒՅՔԸ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՕՏԱՐՄԱՆ ԱՃՈՒՐԴԸ ԵՎ ՄՐՑՈՒՅԹԸ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՂ ՈՒ ԱՆՑԿԱՑՆՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ***

# ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

«Ֆլորես» Աճուրդի Տուն ՍՊԸ-ն (այսուհետ՝ Կազմակերպիչ) «Ակսոն» ԱՀ Բորսայի հարթակում իրականացնելու է բաց աճուրդ համապատասխան փուլերով՝ «դասական» (գնի բարձրացմամբ), այնուհետեւ «հոլանդական» (գնի նվազեցմամբ) եղանակներով: Աճուրդի ընթացքում վաճառվելու են հետեւյալ լոտերը՝

«Արդշինինվեստբանկ» ՓԲԸ-ին օտարման իրավունքով պատկանող՝

- ՀՀ, Լոռու մարզ, ք. Վանաձոր, Չերկասի փողոց, 1 շենք, թիվ 7 հասցեում գտնվող 74.25 ք.մ. մակերեսով բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 6800000 ՀՀ դրամ:
- ՀՀ, ք. Երեւան, Կենտրոն համայնք, Արհեստավորների 1-ին (Կոլխոզնիկների 1-ին) փողոց, թիվ 119 հասցեում գտնվող 193.89 ք.մ. մակերեսով բնակելի տուն, 18.7 ք.մ. մակերեսով օժանդակ շինություն եւ 0.035 հա մակերեսով հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 30740000 ՀՀ դրամ:
- ՀՀ, ք. Երեւան, Կենտրոն համայնք, Սայաթ-Նովա պողոտա, 26 շենք, թիվ 14 հասցեում գտնվող 104.21 ք.մ. մակերեսով բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 58975000 ՀՀ դրամ:
- ՀՀ, Կոտայքի մարզ, գյուղ Զովունի հասցեում գտնվող 0.3446 հա մակերեսով պտղատու այգի: Լոտի մեկնարկային գինը՝ 2730000 ՀՀ դրամ:
- ՀՀ, Արագածոտնի մարզ, ք. Աշտարակ, Գ. Լուսավորչի փողոց, թիվ 31 հասցեում գտնվող 465.5 ք.մ. մակերեսով բնակելի տուն, 16.5 ք.մ. մակերեսով պարիսպ եւ 0.136 հա մակերեսով հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 22355000 ՀՀ դրամ:
- ՀՀ, Շիրակի մարզ, գյուղ Զույգաղբյուր, 11 փողոց, թիվ 9 հասցեում գտնվող 216.48/243.44 ք.մ. մակերեսով պահեստ, 166.52/189.0 ք.մ. մակերեսով պահեստ եւ 1.2 հա մակերեսով հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 7440000 ՀՀ դրամ:

Լոտերի նկատմամբ սահմանափակումները՝ գույքերը գրավադրված են:

Աճուրդը՝ ք.Երեւան, Ագաթանգեղոսի 6/1 (3-րդ հարկ) հասցեում 27.12.2013.-ին, ժ. 12:00-ին դասական եղանակով, այնուհետեւ յուրաքանչյուր աշխատանքային օր, նույն վայրում, նույն ժամին՝ հոլանդական եղանակով: Աճուրդի ավարտը՝ 30.01.2014թ.: Աճուրդի մասնակցության նախավճարը սահմանված է համապատասխան գույքի մեկնարկային գնի 1%-ի չափով, որի վճարման վերջնաժամկետը սահմանված է յուրաքանչյուր աճուրդի փուլի օրվան նախորդող աշխատանքային օրվա ժամը 16:00-ն: Նախավճարը վճարվում է «Ֆլորես» ԱՏ ՍՊԸ-ի դրամարկղում՝աճուրդի կայացման հասցեում, կամ բանկային հաշվին («Արդշինինվեստբանկ» ՓԲԸ-ում 2470103078480000 հաշվեհամարին): Աճուրդին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել՝ ֆիզիկական անձանց համար անձը հաստատող փաստաթուղթ եւ Կազմակերպչի կողմից տրված մասնակցի վկայական (այսուհետ՝ աճուրդի վկայական), որը հաստատելու է նաեւ նախավճարի մուծման փաստը, իսկ իրավաբանական անձանց համար՝ կանոնադրությունը, իրավաբանական անձանց պետական գրանցման վկայականը, պաշտոնատար անձի կամ ներկայացուցչի լիազորությունները հաստատող փաստաթուղթ եւ աճուրդի վկայական:

Աճուրդում հաղթող է ճանաչվում այն անձը, ով առաջարկել է ամենաբարձր գինը: Վերջին ամենաբարձր գնային հայտ ներկայացրած մասնակիցը, աճուրդավարի մուրճիկի երրորդ հարվածից հետո, համարվում է աճուրդում հաղթած մասնակից: Աճուրդին մասնակցած, սակայն չհաղթած անձի մուծած նախավճարը վերադարձվում է աճուրդն ավարտվելուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում Նախավճարը ենթակա է վերադարձման, եթե աճուրդը համարվում է չկայացած: Եթե աճուրդում հաղթող ճանաչված անձը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը կամ առուվաճառքի պայմանագիրը, ապա նա կորցնում է իր մուծած նախավճարը Եթե Կազմակերպիչը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը, ապա նա պարտավոր է աճուրդում հաղթող ճանաչված անձին վերադարձնել նախավճարը Լոտերն ուսումնասիրելու ցանկություն հայտնած անձինք կարող են սույն ծանուցման օրվան հաջորդող օրվանից մինչեւ աճուրդի ավարտը, յուրաքանչյուր աշխատանքային օր, ժ. 10:00-ից մինչեւ 18:00-ն, այցելել վերը նշված հասցեներով եւ ծանոթանալ լոտերի հետ՝ այցելությունը նախապես համաձայնեցնելով Կազմակերպչի հետ: Սույն ծանուցումը կարող է փոփոխվել մամուլում հրապարակվելու միջոցով: Աճուրդների անցկացման կանոնակարգին կարող եք ծանոթանալ եւ անվճար ստանալ կանոնակարգի պատճենը, դիմելով Կազմակերպչին՝ ք.Երեւան, Ագաթանգեղոսի 6/1 հասցե: Բոլոր այլ տեղեկությունների համար կարող եք զանգահարել (010) 56-45-13 հեռախոսահամարով կամ այցելել www.flores.am, www.akson.am կայքերը:

# ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԸ ՀԱՅՏԱՐԱՐՈՒՄ Է ՄՐՑՈՒՅԹ ԹԱՓՈՒՐ ԱՇԽԱՏԱՏԵՂԻ ՀԱՄԱՐ

**Համալսարանի երաժշտության ամբիոնի** պրեպոդավատելի **տեղի համար. երաժշտական կրթությունը ցանկալի է:**

Հավակնորդները անձնակազմի հաշվառման բաժին են ներկայացնում հետեւյալ փաստաթղթերը՝

- ❖ Դիմում ռեկտորի անունով
- ❖ Ինքնակենսագրություն
- ❖ Կրթությունը հավաստող փաստաթղթերի պատճենները
- ❖ Անձնագրի պատճենը
- ❖ Լուսանկար 1 հատ
- ❖ Աշխատանքային գրքույկի պատճենը /առկայության դեպքում/:

Փաստաթղթերի ներկայացման ժամկետը՝ մինչեւ ս.թ. դեկտեմբերի 25-ը:

Լրացուցիչ տեղեկությունների համար դիմել անձնակազմի հաշվառման բաժին

հասցեն՝ ք. Երեւան, Տիգրան Մեծ 17 , 200 սենյակ,

հեռ 59-70-84:


**Սրբագրում եւ խմբագրում**

**ամեն ծավալի ու բովանդակության հայերեն տեքստերի, գրքերի**

**E–mail: xachagox@mail.ru, հեռ.՝ 094 48-68-03**


www.azg.am

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60, 060 271112

Լրատուական գործունէութիւն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 04 Ա N 047261, տրուած՝ 18.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրուած է տպագրութեան 11.12.2013, գինը՝ 100 դրամ, տպագրւում է «Տիգրան Մեծ» հրատարակչութեան տպարանում՝ Արշակունեաց 2: